Մի քանի փողոցայիններ են բերել ավագանի, ովքեր հարցեր լուծողի դեր են ստանձնել: Ես անգամ նրանց անունները չգիտեմ, մեկը շիշ էր շպրտում, մյուսը՝ հայհոյում, երրորդը՝ հարձակվում. ամեն ինչ սկսվեց իրենցից: Ինչ վերաբերում է այդ ջուր շփող տիկնոջը, չգիտեմ էլ՝ ինչ սեռի կենդանի է, մշտապես ցածր պահվածք է դրսեւորում:

Կարդացեք՝ էջ 4

Ես կարծում եմ, որ նրա իշխանությունն ավարտվելու է մոտ ապագայում: Հասարակության մեծ հատվածը հիասթափված է, երկիրը կանգնած է անվտանգային, քաղաքական ու բարոյական ծանր խնդիրների առաջ: Ռեպրեսիաներով հնարավոր չէ վերականգնել հանրային վստահությունը, ապահովել զարգացում կամ լուծել անվտանգության հարցերը:

Կարդացեք՝ էջ 7



Իսկ ո՞վ է այնքան ուժեղ, որ կարող է երաշխավորել իր դաշնակիցների անվտանգությունը, չլինի՞ ԱՄՆ-ն, որի մերձավորարեւելյան դաշնակիցներ Կատարը, Բահրեյնը, Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան ենթարկվում էին Իրանի հրթիռակոծմանը միայն այն պատճառով, որ իրենց տարածքում ամերիկյան ռազմաբազաներ էին կառուցել:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 102 (4237), 24 հունիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Անդատները վերցնել-չվերցնելու օրակարգային հարցին չի զիջում նաեւ մեկ այլ հարց՝ ընդդիմությունն արդյոք համաձայնելո՞ւ է զբաղեցնել օրենքով հասանելիք պաշտոնները՝ ԱԺ փոխխոսնակի, որն այս դեպքում Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությանն է բաժին հասնելու, եւ մշտական հանձնաժողովների նախագահ-փոխնախագահների: Չնայած Սամվել Կարապետյանի թիմից վստահեցրին, որ դեռեւս հարցը չեն քննարկել, սակայն տեղեկություններ կան, որ այս հարցում եւս տեսակետները միանշանակ չեն: Ընդդիմադիրների մի խումբ արմատական է տրամադրված՝ այդ պաշտոնները ստանձնելը կնշանակի հարմար տեղավորվել կոմֆորտ զոնայում եւ մոռանալ արտահերթ զարգացումների մասին, հետեւաբար՝ ճիշտն այդ պաշտոնները բոյկոտելն է, հատկապես որ անցնող խորհրդարանի փորձը ցույց տվեց, որ դրանից իշխանությունը վատ չի զգում եւ որեւէ բարդույթ չունի, որ Սահմանադրության պահանջը չի կատարվում: Հիշեցնենք, որ «Հայաստան» դաշինքի հանձնաժողովի նախագահներն ու ԱԺ փոխխոսնակ Իշխան Սաղաթելյանն ընդդիմության նկատմամբ ճնշումների փուլում ինքնակամ հրաժարվեցին իրենց պաշտոններից, ավելի ուշ ՔՊ-ն «Պատիվ ունեմ» խմբակցության ներկայացուցիչ Թագուհի Թովմասյանին հեռացրեց մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

Լոռու մարզում՝ Գյուլագարակ գյուղի մոտ, հայտնի Դենդրոպարկի հարեւանությամբ գործող «Սոճուտ» հանգստյան տունը շատերին է հայտնի: Այն դեռ սովետական տարիներին Հայաստանի լավագույն հանգստավայրերից էր համարվում, թոքերի հետ կապված առողջական խնդիրներ ունեցողներին բժիշկները խորհուրդ էին տալիս մեկնել «Սոճուտ», քանի որ սոճիների անտառը բուժիչ դեր ունի նաեւ: Մենք տեղեկացանք, որ մոտ մեկ ամիս առաջ «Սոճուտը» հակահրդեհային կանոնների խախտման պատրվակով փակել են: Իսկ սա հանգստի լավագույն սեզոնն է այս հանգստավայրի համար: Թերեւս պատճառը «Սոճուտի» սեփականատերերի քաղաքական հայացքներն են. հանգստավայրը կապվում է խորհրդային տարիների հայտնի ղեկավարներից մեկի՝ ՀԽՍՀ սովմինի նախագահի տեղակալ Ալեքսան Մատվեյիչի որդու՝ Աշոտ Կիրակոսյանի անվան հետ, որը մտերիմ է Կարապետյանների հետ: Մենք տեղեկացանք, որ հակահրդեհային «խախտումները» հանգստյան տան տնօրինությունը վաղուց վերացրել է, գրավոր դիմել է օբյեկտը փակող կառույցին, բայց օրերն անցնում են՝ պատասխան չեն ստանում:

Մինչեւ վերջին ոտուտակը

Երբեք Հայաստանում անկախ մարմիններն այսքան կուսակցականացված եւ գործադիր իշխանության կողմից հպատակեցված չեն եղել, ինչքան հիմա: Օրենսդիր մարմնի վերջին տարիների գործունեությունը բազմիցս ապացուցել է, որ առաջնային մանդատով՝ հանրության կողմից ընտրված այդ մարմինը իշխող կուսակցության ֆիլիալն է՝ կառավարությանը եւ նրա ղեկավարին ենթակա կոճակ սեղմողների համույթ, որը երբեք ինքնուրույն կարծիք չի հայտնում, ինքնուրույն քայլ չի անում: Բայց Նիկոլ Փաշինյանը չբավարարվեց միայն օրենսդիր մարմնի ոչնչացմամբ, նա հետեւողականորեն կուսակցականացրեց դատարաններն ու Սահմանադրական դատարանը, դպրոցները, բուհերն ու Գիտությունների ակադեմիան, Բարձրագույն դատական խորհուրդը, Քննչական կոմիտեն, դատախազությունը, Հակակոռուպցիոն կոմիտեն, ԱԱԾ-ն ու Արտաքին հետախուզության ծառայությունը, անգամ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտին թույլ չտվեցին իր կարծիքն ունեցող տնօրեն ունենալ: ՔՊ-ին կից մարմինների են վերածվել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, Կենտրոնական բանկը, Հաշվեքննիչ պալատը: Փորձեք մտովի հիշել, թե այս կառույցներից որն ինչ դերակատարում ունի երկրում, երբ է վերջին անգամ հանդես եկել որեւէ նախաձեռնությամբ կամ ասուլիսով: Այս կառույցների ղեկավարները, եթե անգամ որեւէ հայտարարություն են անում, ապա դա Նիկոլ Փաշինյանի որեւէ հայտարարության կրկնությունն է լինում կամ՝ հիմնավորումը: Նրանց պարբերաբար ստիպում են ասպարեզ գալ՝ Փաշինյանի որեւէ վիճելի, անօրինական, կասկածելի հայտարարությունը հիմնավորելու, հաստատելու, ամրապնդելու տեքստով: Այսպես ասած՝ պարտադրում են վճարել իրենց բարձր աշխատավարձի եւ կարգավիճակի դիմաց, որը նրանց մեծարգո պարոն Փաշինյանն է նվիրել:

Նախընտրական փուլում Եկեղեցու դեմ արշավի ժամանակավոր դադարը պայմանավորված էր հարցումներով, որ այդ արշավը վնասում է ՔՊ-ին: Բայց որ Փաշինյանը չի հրաժարվել կաթողիկոսին հանելու մտասեւեռումից, ակնհայտ էր բոլորին: Վեհափառին մոտ շրջապատից մեզ պատմեցին, որ Փաշինյանի պյուռոսյան հաղթանակի մասին իմանալուց հետո Գարեգին Բ-ն մերձավորներին ասել է, որ գիտի՝ շուտով իր հետեւից գալու են, բայց եթե անգամ փորձեն իրեն մորթել, միեւնույն է՝ ինքնակամ հրաժարական չի տա, պատրաստ է անգամ բանտ նստել, բայց չհանձնվել: Նաեւ վստահություն է հայտնել, որ Փաշինյանը չի կարող իր փոխարեն ֆեյք կաթողիկոս կարգել, քանի որ համայնքը չի հանդուրժի տիրադավի:

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՐԱՎԵՐԻՆ

Ընտրությունները կեղծելու մեջ Նիկոլ Փաշինյանին մեղադրող Սամվել Կարապետյանն օրերս հայտարարեց ընդդիմադիր ուժերի համախմբման եւ փողոցային պայքարը «ճիշտ պահին գեներացնելու» մասին. «Քանի որ մենք այդ սխալը թույլ տվեցինք ընտրություններից առաջ, շատ ընդդիմադիր ուժեր, որոնք միգուցե ազնիվ պայքարում էին, բայց գերագնահատեցին իրենց ուժերը, շատերի հետ մենք չկարողացանք պայմանավորվել»: Կարապետյանը կոչ արեց ընդդիմադիրներին՝ համախմբվել մեկ հարթակում: Չնայած նրա առաջարկն արդեն հասցրել են որոշ ուժեր ողջունել, սակայն, մեր տեղեկություններով, այս օրակարգով դեռեւս հանդիպում, համատեղ քննարկում չի եղել: Միասնական հարթակ ձեւավորելու մասին ընդհանրական խոսակցություն եղել է ԿԸՀ-ի՝ ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակելու եւ ԲՀԿ-ին խորհրդարանից դուրս թողնելու որոշումից առաջ, երբ հայտնի վեց ուժերի հայտարարությունը հաջորդեց, որոնք բարձրաձայնեցին, որ չեն ճանաչում ընտրությունների արդյունքները: Այս հայտարարությունը կյանքի կոչելուց առաջ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների հանդիպման ընթացքում է բարձրաձայնվել հետընտրական միասնական հարթակի ձեւավորման անհրաժեշտության մասին, որին հաջորդել է ընդդիմության առաջնորդի՝ Կարապետյանի հրապարակային առաջարկը: Սակայն ընդդիմադիր դաշտում, մեր տեղեկություններով, ուշի-ուշով սպասում են գործնական քայլերի, Կարապետյանից հանդիպման հրավերի, ոմանք երեկվա դրությամբ տարակուսած էին: Բանն այն է, որ հունիսի 26-ին ՍԴ-ում քննվելու է ընդդիմության՝ ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին հայցը, սակայն միասնական ընդդիմությունը դեռ քայլեր չի որոշել, մինչդեռ Սամվել Կարապետյանն ակնարկում էր, որ հանրահավաք են նախաձեռնելու: Մյուս կողմից՝ ՍԴ հայցը մոտ երկու շաբաթ քննվելու է, եւ դեռ ժամանակ կա:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓՈԽԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ԹՈՂ ԻՐ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՔԸ ՓՈԽԻ

*«Հրապարակի» զրուցակիցը **Վրթանես քահանա Բաղալյանն** է:*



- Մայր Աթոռից մեզ հետ զրույցում հաստատել էին այն տեղեկությունը, որ Հայ առաքելական եկեղեցին վերջերս պետական բյուջե մեծ գումարներ է վճարել: Խոսքը մի քանի 100 հազար դոլարի մասին է, այսպես կոչված՝ մոմի՝ պարաֆինի հարկն է վճարվել: Նիկոլ Փաշինյանը, անցած ամառվանից սկսած, սեւեռվել էր եկեղեցու վրա, հայտարարում էր, որ Վեհափառը պետք է հեռացվի աթոռից, սրբազաններին էր կալանավորում: Ապա խոսում էին եկեղեցուն հարկելու մասին: Այն մասին, որ Մայր Աթոռը պետք է գույքահարկ վճարի եւ այլն: Փաստորեն, իշխանությունները հանրային գումարներն անարգել մսխում են, միլիարդների տոնածառներ են գնում, ֆեստիվառներին են փող հատկացնում, այս տարի էլ Վարդավառի համար են փող հատկացրել, արտաքին պարտքը 8 տարում կրկնապատկել են, սակայն դա էլ իրենց չի բավականացնում, հիմա էլ եկեղեցուց են գումարներ պահանջում ու ստանում:

- Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմի ընչաքաղցությունը սահմաններ չունի: Մենք վերջին ութ տարիների ընթացքում տեսանք բաներ, որոնք երբեք չէինք տեսել, օրինակ՝ տեսանք, որ ութ տարում արտաքին պարտքը կարելի է ութ միլիարդ դոլարով ավելացնել: Եվ այդքան պարտքի տակ ընկնելուց հետո նրանց արած գործերը չենք տեսնում: Ի վերջո, այդ պարտքը ժողովուրդն է փակում՝ իր հարկերով, վճարած գումարներով, ես շատ կուզեի տեսնել այն 500 դպրոցները, որոնք իբրեւ թե կառուցել են, կխնդրեի վարչապետին, որ հրապարակի իր կառուցած դպրոցների լուսանկարները: Խոսում են նաեւ վերակառուցած ահռելի քանակով դպրոցների մասին, կխնդրեմ, որ նաեւ դրանց ցանկը հրապարակի եւ այն 300 մանկապարտեզների հասցեները եւ լուսանկարները, որոնք նա խոստանում էր կառուցել, նորոգել եւ այլն: Ի դեպ, Աշտարակում էլ ուսանողական քաղաք էին կառուցում, կխնդրեմ նաեւ Աշտարակից լուսանկարներ հրապարակել, ուզում եմ տեսնել, թե այսքան տարվա ընթացքում ինչ գործ են արել: Շատ կուզեի նաեւ Աջափնյակի մետրոյի կայարանում իջնեի, դա էլ էին խոստացել, չէ՞: Իրականում, այս մարդիկ անլուրջ են, նրանց հակաեկեղեցական պայքարը, որը շարունակվում է, նույնպես անլուրջ է: Պահանջում են հարկեր նաեւ եկեղեցական շինությունների համար, փորձում են եկեղեցին մաշեցնել այս քայլերով: Մենք թուղթ ենք բերում՝ սահմանով, որ գրքեր տպենք Հայաստանում, իրենք մեզնից թղթի համար գումար են վերցնում, բայց երբ աղանդավորը՝ Եհովայի վկան կամ մասոնականը դրսից տպած գիրք է բերում, դա համարում են բարեգործական: Այսինքն՝ Եհովայի վկայի կամ մորմոնականի բերած գիրքը բարեգործական է, իսկ Առաքելական եկեղեցին ներկրած թղթի համար գումարներ է վճարում, կամ՝ պարաֆինը, որ բերում են, պիտի դրա համար ահռելի հարկեր տանք պետությանը: Մայր Աթոռի շինություններից են հարկեր պահանջում, ինչն ամոթ է ուղղակի:

- Բայց Փաշինյանը շարունակում է հավատացյալ խաղալ, կիրակի օրը կրկին որոշել էր սուրբ պատարագի մասնակցել, սակայն վերջին այցելություններին այլեւս չեն պարտադրում Վեհափառի անունը զեղչել, գուցե չեն կարողանում պարտադրել:

- Ի պատիվ եկեղեցականների, նրանք ցույց տվեցին, որ աջակցում են Վեհափառ հայրապետին, նաեւ վերջին ընտրությունների արդյունքներից մենք մի բան հասկացանք, որ անկախ այն բանից, որ այսքան վարչական ռեսուրս կիրառվեց, տարբեր ձեւերով մարդկանց վախեցրին, կրթական հաստատությունների աշխատակիցներին ճնշեցին, սակայն անգամ 50 տոկոս քվե չկարողացան ստանալ: «Հայկական ժամանակի» իր օգնականը՝ Վահագն Հովակիմյանն ամեն ինչ արեց, որպեսզի ՔՊ-ն ստանա բավարար քանակով ձայներ, որպեսզի գոնե կարողանան վարչապետ ընտրել: Դա էլ չէր ստացվում, մի քանի տեղամասում քվեներն անվավեր ճանաչեցին, որպեսզի կարողանան իրենց ուզածին հասնել, Փաշինյանը մաթեմատիկայից թույլ է, ճիշտ հաշվարկ չէր արել, իսկ ԿԸՀ-ում չկարողացան անգամ իրենց նկարած թվերը ճիշտ արտագրել: Սկզբում Փաշինյանն ասում էր՝ թող Մայր Աթոռը վճարի, մենք հետո հարկերը հետ կտանք, դե, հիմա միլիոնների հարկեր ենք վճարել, մեքենայիս շարժիչը վատ վիճակում է, թող Ալեն Սիմոնյանի մեքենայից ինձ էլ գնեն այս հարկերով: Կատակում եմ, ինձ նրանցից ոչինչ պետք չէ:

- Փաշինյանը որպես նախընտրական խոստում ասել է, որ իր վերընտրվելու դեպքում Գարեգին Բ կաթողիկոսի հարցը լուծելու է, նրան հեռացնելու է Վեհարանից: Կհաջողվի՞ նրան:

- Կաթողիկոս փոխելու փոխարեն թող իր կնոջ ու զավակների վարքը փոխի, եթե ինչ-որ բան փոփոխելու ունակ մեկն է: Թող իրեն միացածների, իր թիմակիցների վարքը փոխի, մենք էլ տեսնենք, իրենցից օրինակ վերցնենք: Թող հակաեկեղեցական պայքարին միացածների, այն թույլ վարքի տեր հոգեւորականների վարքը փոխի: Իհարկե, եթե նրանք պետք է մեզ բարեփոխեն, ավելի լավ է՝ անբարեփոխ գնանք մեռնենք:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱՆՊԱՅՄԱՆ ՊԵՏՔ Է ԱՍԵՆ ԱՆՑԱՆԿԱԼԻ ԱՆՁ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Մեր զրուցակիցը նախկին փոխոստիկանապետ, փաստաբան **Հովհաննես Քոչարյանն** է:

- Սփյուռքում ապրող այն հայերը, ովքեր քննադատում են Նիկոլ Փաշինյանին, Հայաստան չեն կարողանում այցելել. նրանք պերսոնա նոն գրատա են հայտարարված, նրանց անգամ չեն բարեհաճում բացատրել, թե ինչու: Գալիս հասնում են «Զվարթնոց» եւ իմանում, որ իրենց մուտքը փակ է: Օրինակ, Մուրադ Փափազյանը, Անդրանիկ Միհրանյանը եւ այլք: Արգելված է բացառապես Փաշինյանին քննադատողների մուտքը: Օրենքի տեսանկյունից ինչ գնահատական կտաք այս ամենին:

- Այս հարցը, որի մասին խոսում ենք, ունի հստակ օրենսդրական կարգավորում, օտարերկրացիների մասին ՀՀ օրենքով սահմանված հոդված էլ կա: Օրենքը հստակ ասում է, թե որ դեպքերում կարող են այլ պետության քաղաքացիներին Հայաստանում արգելված անձ համարել: Նման նախադեպ կարող է լինել, եթե, օրինակ, անձը Հայաստանի համար սպառնալիք է ներկայացնում իրենից, ինչի վերաբերյալ նախապես ծանուցելու պարտականություն Միգրացիոն ծառայության վրա դրված չէ:

- Խոսքն ինչ տեսակ սպառնալիքի մասին է:

- Օրինակ, Հայաստանի Հանրապետությանն ուղղված սպառնալիք, իբրեւ մարդը կարող է գալ Հայաստան եւ այնպիսի գործունեություն իրականացնել այստեղ, որը պետության շահերին կվնասի: Այդ կարգի ձեւակերպումներ կան օրենքում, սակայն օրենքի այդ կետերը կան մի շարք այլ երկրների օրենքում: Եվ հենց օրենսդրական այդ կարգավորումներն են ԱԱԾ-ին թույլ տալիս, որ նման եզրակացություններ կազմվեն, եւ մարդուն համարեն անցանկալի անձ: Պրակտիկայում չկա նման նախադեպ, որ անձը կարողանա բողոքարկել այդ որոշումը: Կարող է, իհարկե, փորձել, բայց պատկերացրեք՝ մարդը եկել է Հայաստան եւ տեսել, որ իր մուտքը փակ է, ինչ պետք է անի այդ պահին, շոկի մեջ ընկնելուց բացի….

- Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանին ուղղված քննադատությունն ԱԱԾ-ն համարում է պետությանն ուղղված սպառնալիք:

- Ես ներկայացնում եմ օրենսդրական հիմքերը, իսկ թե որ հիմքի տակ ինչ են տեսնում, ես չեմ կարող ասել:

- Իսկ ինչո՞ւ են հենց Փաշինյանին քննադատողները հայտնվում թիրախում:

- Ամեն դեպքում, օտար պետության քաղաքացուն սխալ է ընդդիմադիր համարելը, անկախ բոլոր քննադատություններից: Օտարերկրացին չի կարող Հայաստանում լինել ընդդիմադիր, կարող է քննադատել Հայաստանի իշխանություններին:

- Տարբերությունը ո՞րն է:

- Ընդդիմադիր գործիչը նա է, ով իշխանությունների նկատմամբ ունի կոնկրետ դիրքորոշում:

- Օրինակ՝ Ֆրանսիայում կան շատ դաշնակցական հայեր, եւ նրանք ընդդիմադիր գործիչներ են:

- Եթե մարդիկ գտնում են, որ արգելված անձ են համարվում ոչ թե արարքների համար, այլ այն բանի համար, որ ուղղակի քննադատել են իշխանությանը, կարող են դիվանագիտական ուղիներով պարզաբանումներ պահանջել, ինչու չէ՝ նաեւ վիճարկել այդ որոշումները:

- Օրենքի սահմանո՞ւմ է, երբ մարդկանց անգամ չեն ասում պատճառը, թե ինչու են անցանկալի անձ համարում:

- Նախապես ասել չեն կարող, բայց եթե հայտարարում են, որ տվյալ անձի մուտքն արգելված է, ապա նաեւ պետք է ասեն՝ երբ եւ ինչու: Եթե դա չեն անում, ուրեմն սխալ է, անպայման պատճառը պետք է ասեն:

7 ուսանող, եւ ամբիոնը նորից կգործի

Մենք օրեր առաջ գրել էինք, որ ԵՊՀ ռեկտորատից ԵՊՀ Եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի դեկանի ԺՊ-ին տեղեկացրել են, որ լուծարվում է Արտասահմանյան գրականության ամբիոնը, որը ԵՊՀ ամենահին ու կարեւոր ամբիոններից է, եւ որի ղեկավար, քաղաքագետ, ընդդիմադիր հայացքներ ունեցող Անուշ Սեդրակյանը մասնակցում էր ընտրություններին՝ «Միասնության թեւեր» կուսակցության ցուցակով: Սակայն ֆակուլտետում հենց այս պահին գործում է «Արտասահմանյան գրականություն» մագիստրոսական ծրագիրը, եւ մի շարք ուսանողներ ուսանում են այդ ծրագրով: Ի պատասխան մեր հրապարակումներին՝ ԵՊՀ-ն հաղորդագրություն էր տարածել՝ անդրադառնալով Արտասահմանյան գրականության ամբիոնի լուծարման թեմային: Նշել էին, որ սա բուհի բարեփոխումների շրջանակում է արվում, ամբիոնը փոքր ծանրաբեռնվածություն ունի, իսկ ամբիոնի վարիչի պահանջներին Անուշ Սեդրակյանը չի համապատասխանում: Բուհի ղեկավարությունը մեծահոգաբար ընդառաջել է Սեդրակյանի խնդրանքին՝ նրան թողնելով, որ պաշտոնավարի ամբիոնի վարիչի ԺՊ-ի պաշտոնում, քանի որ ամբիոնի վարիչի կարգավիճակն իրեն անհրաժեշտ է եղել արտերկրում գործունեություն ծավալելու համար:

Արտասահմանյան գրականության ամբիոնից տեղեկացանք, որ, հակառակ բուհի ղեկավարության ցանկությանը, ամբիոնը հայտարարել է 2026-2027 տարվա համար մագիստրատուրայի ընդունելություն: **Անուշ Սեդրակյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ ընդամենը 7 ուսանող է հարկավոր, որպեսզի մագիստրոսական ծրագիրը գործի. «Այս ծրագիրն էքսկլյուզիվ ծրագիր է եւ համապատասխանեցված է աշխարհի բոլոր առաջատար բուհերի ծրագրերի հետ: Ապահովում է միջգիտակարգային մոտեցում, քննադատական մտածողության սեգմենտ, գործնական հմտություններ՝ երեքը միասին: Ուսումնասիրում ենք, օրինակ, քաղաքականությունը եւ գրականությունը համատեղ, ֆրանսիական էքզիստենցիալիզմ, նշանագիտություն, ստեղծագործական վարպետություն եւ այլն: Այդ ամենը մեր դիմորդին տալիս է անգնահատելի հնարավորություններ՝ թարգմանական ոլորտում, խմբագրական ոլորտում, ինչու չէ՝ հենց լրագրության ոլորտում: Մատների վրա կարելի է հաշվել Լրագրության ֆակուլտետի այն շրջանավարտներին, ովքեր կարող են տեսական հոդվածներ գրել մշակույթի եւ փիլիսոփայական տենդենցների մասին»: Սեդրակյանը վստահ է, որ եթե մագիստրոսական ծրագիրը գործի, իշխանություններին չի հաջողվի լուծարել ամբիոնը: Իսկ ինքը պատրաստ է զիջել ամբիոնի վարիչի պարտականությունները, միայն թե ամբիոնը չտուժի՝ չլուծարվի: Անուշ Սեդրակյանի խոսքով՝ արդեն 4 դիմորդ դիմել է ծրագրի համար, եւս 3 ուսանողի են սպասում:

ՔՊ-ական պատգամավորները պատգամավորական երդման տեքստը փոխելու նախագիծ են շրջանառել:

Նախորդ համարում գրել էինք, որ ՔՊ-ական պատգամավորները պատգամավորական երդման տեքստը փոխելու նախագիծ են շրջանառել:

ՔՊ-ականներ Ալեն Սիմոնյանի, Արուսյակ Ջուլհակյանի եւ Հասմիկ Հակոբյանի հեղինակած նախագծով առաջարկվում է գործող երդման տեքստից դուրս թողնել «հանուն համազգային նպատակների իրականացման», «ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար» ձեւակերպումները եւ դրանց փոխարեն տեքստում ավելացնել, որ ՀՀ քաղաքացիների համար անելու են ամեն ինչ՝ «անվտանգության ու ազատությունների պաշտպանության համար»: Ինչպես նաեւ՝ երդման տեքստը եզրափակել Փաշինյանի հետպատերազմական լոզունգներից մեկով. «Փառք նահատակներին, եւ կեցցե Հայաստանի Հանրապետությունը»: Զրուցել ենք նախագծի համահեղինակներից **Հասմիկ Հակոբյանի** հետ:

- Ինչո՞ւ որոշեցիք պատգամավորական երդման տեքստը փոխել, որոշ արտահայտություններ դուրս թողնել, փոխարենը համալրել Փաշինյանի լոզունգներով:

- Դուք նախագծի հիմնավորումները չե՞ք կարդացել, այնտեղ պարզ գրել ենք:

- Կարդացել եմ, բայց շատ տարօրինակ եւ անհասկանալի առաջարկներ կան, օրինակ, ձեր իշխանությունն անվտանգության ապահովման առումով ամենախոցելին է, բայց դուք ասում եք, թե ամեն ինչ անելու եք քաղաքացիների անվտանգության համար:

- Դա Ձեր գնահատականն է, Դուք ո՞նց եք Ձեր գնահատականները դնում:

- Ի՞նչն է ձեզ դրդել՝ փոխել նախկին տեքստը:

- Վատ է, որ Ձեր գնահատականը դնում եք որպես հարյուր տոկոսանոց ճշմարտություն, բայց մեր իշխանության ժամանակ է, որ տարիներով զոհ չկա սահմանին, վիրավոր չկա, եւ կրակոց չկա սահմանին: Եթե դուք դա չեք համարում անվտանգության ցուցիչ, ուրեմն չգիտեմ՝ ինչն է ձեր համար անվտանգությունը: Ձեր էն անցած բարի ժամանակ՝ անվտանգության տարիներին, ամեն օր մեր եղբայրները գնում էին, վիրավորվում էին, ամեն զինվոր ունեցող ծնողը չէր քնում, մինչեւ առավոտը չէր իմանում, որ դիրքից անվտանգ իջել է: Հիմա նման բան չկա, եթե ձեր համար դա անվտանգություն չի, ուրեմն չգիտեմ՝ ինչն է անվտանգություն:

- Հիմա ձեր շնորհիվ Արցախ չկա...

- Ինչի այն ժամանակ կմ՞ր:

- Չկմ՞ր:

- Կմ՞ր:

- Իհարկե, կար:

- Հմ՞, իսկ առանձին հանրապետությո՞ւն էր, թե՞ Հայաստանի մաս էր:

- Շատ լավ գիտենք՝ ինչ էր, ոնց էր, ու ձեր ասած զոհերի հանգամանքներն էլ գիտենք՝ հանուն ինչի էր, հայրենիք էր պահվում:

- Հայաստանի սահմանին կրակոցներ չկմ՞ր: Քանաքեռի չաստում, այո, չկար կրակոցներ, բայց ամբողջ երկայնքով արդյո՞ք կար կրակոցներ, թե՞ զոհեր չկար:

- Իսկ չե՞ք տեսնում, որ իրավիճակը փոխվել է՝ Արցախն այլեւս չկա, Հայաստանի սահմանին էլ եթե անգամ կրակոց չկա, որովհետեւ չորս կողմից օկուպացրել են, Կիրանցում էլ ինչ ուզեցին՝ տվեցիք, էլ ինչո՞ւ կրակեն:

- Իսկ իրենք ի՞նչ են ստացել Կիրանցում: ՀՀ սուվերեն տարածքից ինչ-որ հատվա՞ծ է Ադրբեջանը մեզնից ստացել:

- Այո, կադաստրի վկայականներ կային:

- Ձեզ խորհուրդ կտամ՝ կամերան վերցնել, գնալ Կիրանց եւ ասել՝ ցույց տվեք՝ ինչ սահման է մնացել ՀՀ տիրապետության տակ, ինչն է անցել, ձեզ կասեն: Եթե մենք դա չենք նկարում ու չենք խոսում, դա չի նշանակում, որ ինչպես ուզեք, կարող եք մանիպուլացնել:

- Մեկ էլ Ջերմուկում կամ Վարդենիսում չեն օկուպացրել մեր սահմանները:

- Եկել են, մեր սուվերեն տարածքը զավթել են, բայց մենք հրաժարվո՞ւմ ենք մեր տարածքից, սահմանազատումը երբ անենք, դրանք հետ կստանանք: Երբ որ ժամանակին մենք ենք առաջ գնացել՝ տարբեր իրադարձությունների բերումով՝ որպես բուֆերային գոտի, ինչ կարողացել ենք, վերցրել ենք, մեր տարածքներն ապահովագրել ենք...

- Ձեր իշխանությունն է նման գոտիներ վերցրել:

- Հայաստանի Հանրապետությունը:

- Բայց ձեր իշխանության ժամանակ երբեք նման բան չի եղել:

- Հայաստանի Հանրապետությունն իր անկախությունից հետո, Ադրբեջանի հետ պատերազմից հետո, որ ինչ-որ տարածքներ առաջ ենք գնացել, բուֆերային գոտի եւ այլն, հիմա, որ ուզում ենք գծենք՝ որն է մերը, դուք մեզ մեղադրում եք, երբ հիմա Ադրբեջանն է մեր տարածքները զավթել, ըստեղ պետք չի քննադատել, այսինքն, ուզում եմ ասել՝ նույն իրավիճակն է, բայց դուք մի դեպքում քննադատում եք...

- Նորմա՞լ չէ՞, որ ես իմ պետության շահը պիտի պաշտպանեմ, ոչ թե հանդես գամ Ադրբեջանի շահերից:

- Նորմա՞լ չի: Օրինակ, դուք սպանությանը ո՞նց եք վերաբերվում՝ վատ, եթե քո երեխան է սպանել, ուրեմն լավ է արել, եթե քո երեխուն են սպանել, ուրեմն դու վատ ես վերաբերվում:

- Նախ՝ դրանք տարբեր իրավիճակներ են:

- Նույն բանն է, էդ նույն վատ բանը հիմա արել է Ադրբեջանը մեր հանդեպ, մենք ասում ենք՝ մեր տարածքներից չենք հրաժարվել, էդ որտե՞ղ ենք մենք զիջել:

- Վերադառնանք երդման տեքստի փոփոխությանը՝ ինչո՞ւ եք ջնջել «հանուն համազգային նպատակների» արտահայտությունը:

- Ո՞րն է էդ համազգային նպատակը:

- Դուք ասեք, դուք եք փոխել, թե՞ կարծում եք, որ համազգային նպատակ չի կարելի ունենալ, օրինակ, իմ կարծիքով՝ ցեղասպանության թեմայով միշտ համազգային նպատակ ենք հետապնդել:

- Մենք մանրամասնել ենք՝ որն է մեր համազգային նպատակը, օրինակ՝ քաղաքացիների անվտանգության ապահովումը: Դուք չգիտե՞ք, որ ցեղասպանության ճանաչումը մեր թիվ մեկ առաջնահերթությունը չի:

- Նկատի ունեք ՔՊ-ի՞:

- Հայաստանի Հանրապետության ընտրված իշխանության: Դա դուրս չի մնացել մեր օրակարգից, բայց դա մեր թիվ մեկ առաջնահերթությունը չի, թիվ մեկ առաջնահերթությունը խաղաղությունն է տարածաշրջանում, սահմանների անվտանգությունը, ինչը մենք ապահովել ենք:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ պետական ինստիտուտներում գործող բոլոր տեքստերը մտադիր եք փոխել, հարմարեցնել ձեր՝ ՔՊ-ի պատկերացումներին:

- ՔՊ-ի պատկերացումները չեն, այլ Հայաստանի անվտանգությունից բխող բաներ են: Չէ, եկեք կենացներ խմենք՝ ծովից ծով Հայաստանը ետ բերելու, եթե կուզեք՝ էդպես կենացներ խմենք, արել ենք 35 տարի, մեզ ի՞նչ է տվել:

- «Փառք նահատակներին, կեցցե Հայաստանի Հանրապետությունը» Փաշինյանի հետպատերազմական լոզունգն ավելի ոգեշնչո՞ղ է, քան...

- Թե էդտեղ էլ եք խնդիր տեսնում, փառք չի՞ նահատակներին, դա նաեւ հայտնի արտահայտություն է, որը նախկինում էլ է օգտագործվել շատերի կողմից, մենք ինչին էլ որ հասել ենք, դա մեր նահատակների զոհողությունների գնով է եղել, եւ վստահ ենք, որ նրանց պայքարն այսօրվա Հայաստանի անկախության, անվտանգության, ինքնիշխանության համար է եղել:

- Ի դեպ, որ մի քանի անգամ շեշտեցիք, թե ընտրված իշխանություն եք, ուզում եք ասել, որ ինչ կուզեք, կանեք, ոչի՞նչ, որ դուք սահմանադրական մեծամասնություն չունեք, անգամ 50 տոկոս չեք հավաքել, իսկ ըստ ձեզ քննադատողների՝ գողացել եք ԲՀԿ-ի մանդատները, եւ դրա շնորհիվ է, որ կարողանալու եք սահմանադրական մարմինների ղեկավարներ ընտրել: Բայց չէ՞ որ այս տեքստով երդվելու են նաեւ ընդդիմադիրները, որոնք քիչ են ձեզ զիջում, եւ գուցե համազգային վերոնշյալ նպատակներն իրենք ունեն՝ իրենց ընտրողներով հանդերձ: Ինչո՞ւ պիտի ձեր ճաշակով գրված տեքստով երդվեն:

- Ձեր սիրելի դաշնակցական պատգամավորները... համազգային նպատակներով տեքստով չեն երդվում, որովհետեւ նրանք մի երդում են տալիս, դա զենքի վրա դաշնակցական երդումն է:

- ՀՅԴ-ական պատգամավորները եւս տարիներ շարունակ խորհրդարանում երդվել են:

- Ոչ, Իշխան Սաղաթելյանին զանգեք՝ իր տան խուզարկությունից զատ, կարող է էդ հարցին էլ պատասխանի: Երկրորդ. ինչո՞ւ էիք նախորդ 5 տարիներին Հայկ Մամիջանյանին, Աննա Մկրտչյանին եւ այդ խմբակցության մնացած պատգամավորներին «պատգամավորով» դիմել, բա նրանք անցողիկ շեմը չեն հաղթահարել, կարող ա՞մ ձեռ է տալիս՝ դիմում եք, բայց ՔՊ-ն, որ 0.3 տոկոս էր, որ չէր հերիքում, հիմա ասում եք՝ 50+ էլ չեք հավաքել:

- Նախ՝ օրենքի ուժով են այդ մարդիկ պատգամավոր դարձել, ինքնահռչակներ չեն, երկրորդ՝ ասում եմ, որ դուք այսպիսի ընտրություններով անգամ ընտրողների մեծամասնության քվեին չեք արժանացել, էլ չենք խոսում՝ ՀՀ բնակչության, ո՞նց եք նման ինքնավստահ քայլեր անում՝ անտեսելով մյուսների կարծիքը:

- Բա փոշիացած ձայնե՞ը... կարող է 60 տոկոսից ավել են մեր ձայները կազմում:

- ՀՀ-ում ապրող քաղաքացիների մեծամասնության վստահությունը չունեք՝ միակ փաստը դա է, բայց գնում եք «համազգային նպատակների» փոփոխության:

- Ռուսաստանից բերած ձեր սիրելի կալուգացիների ձայները հանե՞լ եք, ասում եք՝ ՀՀ-ում ապրողների մեծամասնության ձայները չեք ստացել, հաշվե՞լ եք՝ հանե՞լ եք այդ ձայները, թե Հայաստանում ապրողների քանի տոկոսն է մեզ ձայն տվել:

- Իսկ դուք, ինչպես ընդդիմադիրներն են պնդում, առանց ընտրախախտումների կարո՞ղ էիք այդքան ձայն հավաքել:

- Ո՞ր ընտրախախտումներով... Ընդդիմադիրները շատ բան են ասում, 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին էլ էին ասում, ամեն ինչ ճի՞շտ են ասում:

- Վերջին օրերին երեւի չեք լսել ադրբեջանական կողմից հայտարարությունները՝ 300 հազար ադրբեջանցիների մասին:

- Շատ հնարավոր է, որովհետեւ մի ամբողջ ընդդիմադիր դաշտ, որն անցել է նաեւ խորհրդարան, Հայաստանում եւ աշխարհում օրակարգ սարքեցին ադրբեջանցիների վերադարձը, ցույց տվեցին հայերի վախն այդ օրակարգից, բա ի՞նչ պիտի անեն, պիտի խոսեն:

- Մինչեւ ընդդիմադիրների հայտարարությունները, Ալիեւի հոխորտանքները չէի՞ք լսել, Ալեն Սիմոնյանն էլ դեմ չէր, որ ադրբեջանցիները գան՝ միասին ապրեն հայերի հետ:

- Մի մանիպուլացրեք, Ալեն Սիմոնյանն ասել է, որ լավագույն բանն այն կլինի, որ մի շրջան գա, եւ մենք կարողանանք ապրել:

- Դուք իսկապե՞ս ընդդիմադիրներից եք լսել ադրբեջանցիների գալու մասին հայտարարությունները:

- Մենք շատ բան ենք վաղուց լսել, շատ վատ է, որ ադրբեջանցիների ասած ամեն մի հիմարություն վերցնում է կարեւոր դերակատարում ունեցող ընդդիմադիր ֆրակցիան եւ մյուսները ու մեր կյանքում դարձնում են օրակարգ, վախացնում են ժողովրդին, եւ ադրբեջանցիներին էլ ցույց են տալիս, թե որքան հաջողվել է իրենց բառաչանքը:

- Նիկոլ Փաշինյանն էր ընտրություններից առաջ ժողովրդին ահաբեկում՝ եթե ընդդիմությունն անցնի, Ադրբեջանը պատերազմելու է սեպտեմբերին, ինքն ի՞լ էր «իշմար տալիս» Ալիեւին:

- Մենք դա շատ լավ բացատրել ենք, մենք ասել ենք՝ եթե ընդդիմադիրներն անցնեն, ու այս օրակարգը լինի՝ չպարփակվել 29 743-ի մեջ, այսինքն, անհասցե պատերազմի կոչ անել մեր բոլոր հարեւաններին, որովհետեւ մեր սահմաններով չպարփակվելը դա որեւէ հարեւանի սահման մտնելն է, ուղիղ նաեւ պատերազմի կոչ է, ո՞նց եք պատկերացնում՝ մենք մտնենք ուրիշ երկրի տարածք, իրենք հաճույքով պիտի հետ քաշվե՞ն, բա դա պատերազմ չի՞:

- Լավ, անիմաստ է, եկեք ամփոփենք, կա՞մ էլի տեքստ, որ առաջիկայում փոխելու եք՝ ձեր պատկերացումներին համապատասխանեցնեք:

- Մենք ինչ միտք ունենք, բարձրաձայնում ենք, ինչ տեքստ ունենանք փոխելու, կիրապարակենք:

ԴՈՒՔ ՉԳԻՏԵ՞Ք, ՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՄԵՐ ԹԻՎ ՄԵԿ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՎԱԳԱՆԻ

Երեւանի ավագանու նիստը նախ ՔՊ-ական փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի մեղքով խաթարվեց: Նա որոշեց, որ ինքը դատարանից բարձր է, եւ քաղբանտարկյալ Անդրանիկ Թեւանյանին պետական դավաճան հայտարարեց ու սաստեց ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությանը, ապա «Հանրապետություն» խմբակցության անդամ Անի Խաչատրյանը

ՔԱՂԱՔԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ ԹՈՂԱԾ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՂՏՈՏ ԵԼՈՒՅԹՆԵՐ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ

հարձակվեց ընդդիմադիր խմբակցության կին անդամի վրա եւ ջուր շփեց նրա վրա: Իսկ նիստից հետո ՔՊ-ականները հարձակվեցին ընդդիմադիրների վրա եւ իրենց թիկնապահների աջակցությամբ փորձեցին ծեծի ենթարկել: Իհարկե, այս մթնոլորտը երկրում անմիջականորեն Նիկոլ Փաշինյանի ստեղծածն է, որը խրախուսում է ընդդիմության նկատմամբ հաշվեհարդարը եւ ինքն էլ խոսքով վիրավորում է նրանց ու հասկացնում, որ դեմ չէ նաեւ ֆիզիկական հաշվեհարդարին: Էլ չենք խոսում ընդդիմադիրներին զրպարտելու, նրանց անմեղության կանխավարկածը խախտելու մասին:

Առհասարակ, իշխող կուսակցությունում ծեծուջարդով քաղաքական հարցեր լուծելը դարձել է սովորական բան մեր երկրում, իսկ նրա արբանյակ կուսակցություններն ակտիվ մասնակցում են այդ ամենին: «Հանրապետություն» կուսակցության անդամ Նոր Նորքի թաղապետը նախորդ տարի՝ ուղիղ եթերում բլոգեր Արթուր Չախոյանին էր ծեծի ենթարկել, դե իսկ խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը քանիցս հարձակվել է ավագանու ընդդիմադիր անդամների վրա, քաշել ընդդիմադիր կանանց մազերը, ջուր շփել, ոտքով հարվածել, հայհոյել, եւ այսպես շարունակ: Ստացվել է այնպես, որ բացահայտ խուլիգանական պահվածք դրսեւորող իշխանականները երբեք պատասխանատվության չեն ենթարկվում, ավելի են լկտիանում: Եթե նույն բանն աներ որեւէ ընդդիմադիր ուժի ներկայացուցիչ, ապա այժմ առնվազն կալանավորված կլիներ: Երեքշաբթի օրը՝ ավագանու նիստի ընթացքում իրավիճակը հերթական անգամ լարվեց Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանի ելույթից հետո: Գրիգորյանն արձագանքում էր ընդդիմադիր «Մայր Հայաստան» խմբակցության անդամների հայտարարություններին, որոնք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը մեղադրում էին հունիսի 7-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններում ընդդիմության մանդատները գողանալու մեջ: «Ասում են, թե մենք մանդատները գողացել ենք: Դուք ի՞նչ մանդատ եք ունեցել, որ մենք էլ գողացել ենք: Սահմանադրական դատարանում կքննարկվի, կորոշվի, բայց դուք այդ քվեն ու լեգիտիմությունը չունեք, որ մի հատ էլ դա ձեզնից գողանան»,- հայտարարել էր Գրիգորյանը, որից հետո դահլիճում լարվածություն էր սկսվել:

Նիստը վարող Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի եւ ավագանու «Մայր Հայաստան» ընդդիմադիր խմբակցության անդամներից մեկի միջեւ լեզվակռիվ սկսվեց, որը վերածվեց ծեծկռտուքի: Նիստը վարող Փամբուխչյանը հայտարարեց նիստը 30 րոպեով ընդմիջելու մասին, ինչից հետո Անի Խաչատրյանը ջուր լցրեց «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյանի վրա, սկսեց բղավել եւ վիրավորել: «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյանին եւս սադրեցին: Ուշագրավ է, որ Արամ Զավենիչի խմբակցությունն ավելի շատ է «դոշ տալիս» ՔՊ-ականների համար, քան հենց ՔՊ-ականները:

2023-ից սկսած, «Հանրապետություն» կուսակցությունն այնքան է նույնացվել ՔՊ-ի հետ, որ Արամ Զավենիչը 2026-ի հունիսի 7-ի ընտրություններում խայտառակ քիչ ձայներ հավաքեց՝ 2021-ի համեմատ գրեթե երկու անգամ ավելի քիչ ձայն ստանալով՝ ընդամենը 15 հազար քվե: 2021-ին միայն Երեւանում էր մոտ 15 հազար ձայն ստացել, այս անգամ՝ ողջ հանրապետությունում, ինչը հերթական անգամ փաստում է, որ հասարակությունը մերժում է ՔՊ-ի բոլոր կցորդներին: Անգամ նորահայտ Շնորհապետական կուսակցությունը կրկնակի շատ ձայներ էր ստացել «Հանրապետությունից», ինչը խոսում է Զավենիչի ընտրած մարտավարության եւ ղեկավարած կուսակցության ձախողման մասին:

Երեկվա միջադեպի ակտիվ մասնակիցներից մեկը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ **Սուսաննա Մելիքյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով ավագանու նիստի ժամանակ իշխանական երկու ուժերի՝ ՔՊ-ի եւ «Հանրապետության» պահվածքին, նկատեց. ««Հանրապետություն» խմբակցությունը, փաստորեն, մի քանի փողոցայիններ է բերել ավագանի, ովքեր հարցեր լուծողի դեր են ստանձնել, իրենց հիմնական լիազորություններից բացի: Ես անգամ նրանց անունները չգիտեմ, բայց մեկը շիշ էր շպրտում, մյուսը հայհոյում էր, երրորդը հարձակվում էր, եւ ամեն ինչ սկսվեց իրենցից: Ինչ վերաբերում է այդ ջուր շփող տիկնոջը, չգիտեմ էլ տիկին է, թե ինչ սեռի կենդանի է, նա մշտապես ցածր պահվածք է դրսեւորում: Ավագանու նիստ էին բերել 46 հարցից ընդամենը մեկ սուտի զեկուցվող հարց՝ տրանսպորտի բարելավման հետ կապված: Բայց հենց սկզբից իրենք էին քաղաքական հարցեր բարձրացնում, այդ իրենք ամենաառաջինը քաղաքական ելույթներով հանդես եկան: Հիմար-հիմար ելույթներ ունեցան, իսկ մենք արձագանքեցինք նրանց: Ես վստահ եմ, որ այս ամենը նրանք դիտավորյալ են անում: Ընտրություններից առաջ էլ ավագանու նիստը նվիրել էին ՔՊ-ի կեղտոտ քարոզչությանը, նույնը շարունակում են հիմա: Քաղաքին ուղղված հարցերը թողած, քաղաքական կեղտոտ ելույթներով են հանդես գալիս: Շատ տգեղ, ցածր մակարդակ ունեն, կոմսոմոլի, բոլշեւիկի, նեոբոլշեւիկի, կոմկուսի մակարդակի ելույթներ են ունենում, միահեծան, խայտառակ.... մենք չենք ուզում իջնել նրանց ցածր մակարդակին, բայց անարձագանք չենք կարող թողնել այդ ամենը: «Հանրապետություն» կուսակցությունն այս ընտրություններին հավաքեց շատ քիչ ձայն, եւ թող մեծ-մեծ չխոսեն: Իշխանամետ էլ չեն, իշխանության կցորդ են ընդամենը, այդ իրենց շնորհիվ է, որ Տիգրան Ավինյանը երեք տարի է՝ քաղաքապետ է աշխատում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉՈՒ «ԳԵԼԱՓ ԱՐՄԵՆԻԱՅԻ» ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԲԵՐՎԵՑԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, «Գելափ Արմենիան» հարցումներ էր արել եւ ընտրությունների արդյունքներից կտրուկ տարբերվող արդյունքներ ստացել: Ըստ «Գելափ Արմենիայի», խորհրդարան էր անցնելու ոչ թե 3, այլ 5 ուժ, եւ ընտրություններին մասնակցելու էր ոչ թե ընտրողների 58.9 տոկոսը, այլ՝ 65.4: ԲՀԿ-ն հավաքելու էր 8,8 տոկոս՝ երկու անգամ իրական արդյունքից շատ: Թաթոյանի կուսակցությունը 6,2 էր ստանալու, բայց ստացավ դրա կեսը, իսկ «Հայաստան» դաշինքը 15,2 էր ստանալու՝ ըստ «Գելափ Արմենիայի» կանխատեսման: Սխալ էր նաեւ «Ուժեղ Հայաստանի» արդյունքը՝ «Գելափը» կանխատեսել էր 16,4 տոկոս, սակայն ստացավ 23,27: Ինչո՞ւ է այսպիսի մեծ շեղում եղել իրական թվերից:

Ընկերության ղեկավար **Արամ Նավասարդյանը** չի ընդունում, որ շեղումներն ահռելի են կամ «շատ մեծ», եւ կարծում է, որ իր հրապարակած տվյալները, բոլոր մյուս հարցումների տվյալների համեմատ, ամենամոտն են եղել ընտրությունների արդյունքներին:

«Դրանում դժվար չէ համոզվել: Երկրորդ. կան բացատրելի շեղումներ ու անբացատրելի շեղումներ: Մեր հարցումներով՝ շուրջ 33 տոկոս պետք է քվեարկեին ՔՊ-ին: Մենք չենք հավակնում, որ 100 տոկոսանոց ճշգրտություն ունենք, բայց շեղումը չէր կարող լինել 10-ից ավելի տոկոսի: Կարծում եմ, որ այստեղ դեր են խաղացել վարչական ռեսուրսը, զինվորականների քվեարկությունները, ադմինիստրատիվ ռեսուրսը, որոնք մենք չենք կարող չափել: Մենք չափում ենք ներկայացուցչական ընտրանքով, այսինքն, թե հավասար բաշխվածության դեպքում ինչպես հասարակության մեջ, ենթադրվում է, որ ոստիկանները պետք է ունենան տարբեր կարծիքներ: Բայց քանի որ ոստիկանությունը, այլ ուժայինները եւս, պետական ծառայողները, ունենալով ընդդիմադիր կարծիքներ, քվեարկել են իշխող ուժի օգտին, եւ վախի ազդեցությունն է գործել, մենք սա չէինք կարող տեսնել: Չնայած, ես չեմ ուզում բացառել մեր սխալը»:

«Ուժեղ Հայաստանի» տվյալների դեպքում եւս մեծ է եղել շեղումը, եւ Արամ Նավասարդյանը չի բացառում, որ պատճառը կարող էր լինել «խրախուսանքը», որ գնան ու քվեարկեն ինչ-որ ուժի: «Բայց ես ձեռնպահ կմնամ որակումներից, որովհետեւ չկա դատարանի որոշում: Ես նկատի ունեմ խրախուսանքը, որ գնան, քվեարկեն ինչ-որ ուժի»: Իսկ ինչո՞ւ «Հայաստան» դաշինքն ու ԲՀԿ-ն իր կանխատեսումներից քիչ ստացան: «Սամվել Կարապետյանի ուժն ամեն դեպքում, որպես ամենամեծ ընդդիմադիր ուժ, այս երկու ուժերից որոշակի տոկոսներ կլանել է իր մոտ: Միանշանակ, ազդել է նաեւ այն հանգամանքը, որ վերջին երկու օրը իշխանությունը գործադրեց իր ուժային լծակները, կալանավորումներ արեց»: Այսինքն՝ վախի գործոնը որոշի՞չ եղավ: «2021 թվականին էլ կար վախի գործոն, բայց այն ժամանակ կար հետպատերազմյան ապատիայի վիճակը, իսկ 26 թվականին մեծապես դեր խաղաց իշխանության սերմանած վախի մթնոլորտը: Մենք տեսնում ենք ձայնագրությունները: Շատ հետաքրքիր մոտեցում են ցուցաբերում: Եթե նկատել եք, կան այնպիսի ձայնագրություններ, որտեղ ոչ մի խնդրահարույց բան չկա: Միայն 10 տոկոսը կարող է որոշ չափով կասկածելի թվալ, մնացածը կենցաղային խոսակցություններ են: Սա արվում է, որպեսզի քաղաքացիները, լսելով ամեն օր դրանք, մտածեն, որ իրենց էլ կարող են լսել»:

Այս ամենը, ըստ Արամ Նավասարդյանի, մարդիկ հանդուրժում են մինչեւ որոշակի սահման, որից հետո լինում է պոռթկում, ինչը ցույց է տալիս այլ երկրների փորձը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԷՊ

ԲՈՂՈՔԵՔ՝ ԻՆՉՔԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՔ

ՍԴ դիմած բոլոր ուժերին եւ կուսակցություններին ես հաջողություն եմ մաղթում: Ժողովուրդ ջան, ինչքան թիվ ու փաստ բերեք, ինչքան շատ ապացույցներ, որ ընտրությունները կեղծվել են, այնքան լավ: Դրանով դուք ՍԴ-ին այլ ելք չեք թողնի, քան հունիսի 7-ի ընտրություններն անվավեր եւ ՀՀ սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչել: Ոչինչ, որ հիմնական ընդդիմադիր ուժերը բացառապես իշխանություններին վերագրվող ընտրակեղծիքներ ներկայացնեն, իսկ Նիկոլի գրպանային սատելիտները, հակառակը՝ ընդդիմությանը վերագրվող: Ընտրակեղծիքները, միեւնույն է, վերջում գումարվելու են իրար, եւ ստացվելու է մի թվային պատկեր, որը չի համապատասխանելու ԿԸՀ-ի ներկայացրած պատկերին: Այսինքն պարզվելու է, որ ընտրակեղծիքները գումարային առումով ազդել են ընտրությունների ելքի վրա: Ես չեմ էլ կասկածում, որ «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքների, «Բարգավաճ Հայաստան» եւ «Միասնության թեւեր» կուսակցությունների բերած փաստերը լիուլի բավարար են ընտրությունները չեղարկելու եւ նոր ընտրություններ նշանակելու համար, բայց, ինչպես ասում են՝ «մկան շեռն էլ է ջաղացին օգուտ», եւ թող մյուսներն էլ մի լավ բողոքեն ու սեւացնեն այս նիկոլաբարո ընտրությունները: Օրինակ՝ ԴՕԿ-ը, «Հանուն հանրապետության» Արման Բաբաջանյանը եւ էլի ուրիշներ, ինչքան ուժ ունեն, թող բողոքեն: Արամ Սարգսյա՞ն ինչու չի բողոքել: «Բեզ պիծի մինուտ» խորհրդարանական ուժ էր, բայց Նիկոլի կազմակերպած անորակ ընտրությունները թույլ չտվեցին, որ մտնի պառլամենտ: Հիմա որ այդպես «զադնի դրեց», ի՞նչ է ասելու իր «ընտրազանգուլակներին»:

Պատկերացրեք, որ շատ հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել ՍԴ-ի շուրջ: Բարձր դատարանը եզակի հնարավորություն ունի՝ ընտրությունները չեղարկելու միաժամանակ երկու հիմքով: Առաջին՝ խորհրդարան անցած հիմնական ընդդիմադիր ուժերի բողոքների եւ երկրորդ՝ իշխանությունների եւ պրոիշխանական «ընդդիմադիր» ուժերի բողոքների հիման վրա: Երրորդ տարբերակն էլ այն է, որ ՍԴ-ն պարզապես արձանագրի, որ հունիսի 7-ից առաջ, հունիսի 7-ին եւ հունիսի լույս 8-ի գիշերը ոչ թե քարոզարշավ, ընտրություն ու ձայների հաշվարկ է տեղի ունեցել, այլ կազմակերպված հանցագործություն՝ ընտրությունները տապալելու հատուկ մտադրությամբ: Հենց այդպես էլ գրի, որ իշխանությունը՝ իր հերթին, ընդդիմությունն էլ՝ իր հերթին ամեն ինչ արել են, որ ընտրությունները տապալվեն: Կներեք, ԴՕԿ-ից մարդ կա՞մ այստեղ: Մի՞թե ձեր ուզածը հենց սա չէ, որ թե՛ նախկինները եւ թե՛ ներկաները հայտնվեն բանտում: Դե ուրեմն առաջ՝ ինչքան շատ փաստ ու ապացույց բերեք ընտրակեղծիքների մասին, այնքան լավ: Կարծեմ՝ ցանկություն եք հայտնել, որ ձեր բողոքը ՍԴ-ն առանձին քննի: Ինչո՞ւ, մի՞թե ձեզ լավ չեք զգում իսկական ընդդիմության դեմ բողոք ներկայացնելու համար... Բոլորովին էլ վատ մի զգացեք, դուք Երեւանի ընտրություններում ընդդիմությանը մի անգամ արդեն «քաշել» եք, այնպես որ, դա նորություն չէ ձեր պրակտիկայում: Գնացեք եւ իսկական ընդդիմության հետ դատվեք ՍԴ-ում եւ, կրկնեմ, ինչքան կարող եք, շատ ապացույցներ բերեք թե՛ իշխանությունների եւ թե՛ ընդդիմության կատարած ապօրինությունների վերաբերյալ:

Արման Բաբաջանյան, ինչո՞ւ ես գլուխդ հավի պես մտցրել թեւիդ տակ, ծպտուն չես հանում: Հա՛, կա՞չկա՝ Սեդա Սաֆարյանի մոմենտով ես այդպես համավորիկ դարձել: Որ շատ թպրտաս, կարող է տիկնոջը հեռացնեն գործի քննությունից՝ քեզ հետ «կուսակցական կապեր» ունենալու համար: Սիրուն չի, չէ՞, որ կուսակցության առաջնորդը դատարան է մտնում, իսկ այնտեղ դատավորն իր նախկին կուսակիցն է կամ ենթական: Բայց դու մի հուսահատվիր, պարոն Բաբաջանյան, ընտրակեղծիքների մասին վկայող փաստեր հավաքիր եւ ինչքան շատ, այնքան լավ: Միեւնույն ժամանակ ՍԴ-ում քո ֆիզիկական ներկայությունն անգամ բավական կլինի, որ բարձր դատարանն անվավեր ճանաչի հունիսի 7-ի ընտրությունները: Այս կրկնահանցագործին ո՞վ է թույլ տվել մասնակցել ընտրություններին՝ կհարցնի ՍԴ-ն, ու անմիջապես էլ կպարզվի, որ Նիկոլն է դա արել՝ արեւմտամետ Արամ Զավենի՛չի ձայները փոշիացնելու համար: Եթե հիշում եք, Արամ Զավենիչն ու Արման Բաբաջանյանը Գյումրիում միասին միասին էին խայտառակվել: Հունիսի 7-ին Նիկոլը նրանց հանրապետությունով մեկ խայտառակեց՝ յուրացնելով պայծառագլուխ արեւմտամետ հանրույթի ձայները: Իսկ հարցին, թե ինչու Բաբաջանյանին անվանեցի կրկնահանցագործ, պատասխանեմ, որ նա ոչ միայն խուսափել է բանակում ծառայելուց, այլեւ քանիցս չի կատարել ՀՀ դատարանի վճիռները՝ ներողություն խնդրել ՀՀ բազմաթիվ քաղաքացիներից՝ իր երկար լեզվի եւ, առհասարակ, հակահայկական պահվածքի պատճառով:

ՍԴ-ում է լինելու նաեւ ՔՊ-ի ներկայացուցիչը: Ես կուզենայի, որ նա լիներ Նիկոլի ամենամտերիմ մարդկանցից մեկը՝ մեկը նրանցից, որ դեռ քարոզարշավի մեկնարկից առաջ Նիկոլի հետ մարզեր էր գնում, կապիկություններ էր անում ավտոբուսներում, թռնում մարդկանց դեմքներին, երբ մարդիկ քննադատում էին իր առաջնորդին: Ընտրակեղծարարությունները, ի դեպ, սկսվել են դեռ այդ օրերին, երբ ՔՊ-ն իբր մարզեր էր գնում՝ ներկուսակցական քննարկումների շրջանակում: Իրականում նրանք Հայաստանով պտտվում ու համապատասխան ցուցումներ էին տալիս մարզպետներին, թե ինչ անեն, երբ տեսնեն, որ հաղթում է ընդդիմությունը: Դե, մարզերում լիքը անտերուդուս տեղամասեր են լինում, վերահսկողությունը թույլ է, միջամտելը՝ հեշտ: Ավելորդ փակագծեր չեմ բացի, եւ թող ՍԴ-ն ՔՊ-ի ներկայացուցչից պարզի, թե ինչպես են մարզերում ձայն հավաքել, եւ ինչու են մարզպետները, պետական ռեսուրս հանդիսանալով, հանդես եկել ՔՊ-ի առաջին շարքերում:

Եվ վերջում դիմեմ Նիկոլ Փաշինյանին: Պարոն Փաշինյան, դու չե՞ս ուզում դատարան ներկայանալ եւ պատռել «ընտրակաշառք» տված ընդդիմության դիմակը: Ասում էիր՝ ընդդիմության 540 հազար քվեն կաշառքով է, իսկ ձերը (720 հազար)՝ անկաշառ կամ օրգանիկ: Քո այս հայտարարությունը պարզաբանման կարիք է զգում, այլապես խեղճ ՍԴ-ն դա կարող է համարել 540 հազար ձայնի «կեղծարարություն» եւ տեղում չեղարկել հունիսի 7-ի էշի հարսանիքը, որին դու ընտրություն ես ասում: Ես առաջարկում եմ՝ ՍԴ-ում Վահագն Հովակիմյանին միայնակ չթողնել ընդդիմության ծանր հրետանու դեմ: Վստահ եմ՝ Վահագնը առանց քեզ ինչ-որ թվեր կհրապարակի ու քեզ կգցի էն բանի մեջ: Էլ չեմ ասում, որ ԲՀԿ-ն, չգիտեմ արդեն 3-րդ, թե 4-րդ անգամ, կհայտնվի ԱԺ-ում:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՀԳ. *Սիրելի հայրենակիցներ, եթե շատ եք ուզում առաջին ձեռքից իմանալ՝ կեղծվել են հունիսի 7-ի ընտրությունները, թե՝ ոչ, կարող եք հունիսի 26-ին մոտենալ ՍԴ շենքին՝ Բաղրամյան փողոցի սկզբնամաս:*

ՄԵՆՔ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՉԵՆՔ՝ ՇԱՏ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆՔ ԻՇԽՈՂ ՈՒԺԻ ՀԵՏ

Հունիսի 7-ի ընտրություններին մասնակցած 18 քաղաքական ուժերից 7-ը դիմել է Սահմանադրական դատարան՝ պահանջելով չեղարկել ընտրությունների արդյունքները: «Հրապարակ»-ը թեմայի շուրջ զրուցել է «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք»-ով պատգամավորի թեկնածու **Ազատ Արշակյանի** հետ:

- Ի՞նչ հիմքերով է ձեր քաղաքական ուժը դիմել ՍԴ:

- Երկու փաստ կա, մեկը՝ ընտրակաշառքների, խախտումների մասին իրավապահ մարմինների հայտարարությունները, եւ երկրորդը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը՝ այդ հայտարարությունների վերաբերյալ:

- Այսինքն, մյուս ուժերը ՍԴ-ում երբ վիճարկում են վարչական լծակների կիրառումը, այս մասով դուք խնդիրներ չե՞ք տեսնում:

- Ընդհակառակը, մենք կարծում ենք, որ վարչական լծակներ չեն կիրառվել, իշխանությունն անգործության է մատնվել: Մենք այստեղ մյուս ՍԴ դիմողների հետ տարբեր բեւեռներում ենք, մենք գործընկեր չենք, իրար խանգարող ենք: Մեր կարծիքով, օրինակ, 2008-ի մարտի 1-ի գործով դատավճիռ ունեցող քաղաքական ուժերը պետք է չմասնակցեին ընտրություններին, իշխանությունը զավթելու մասով, օրինակ, ԲՀԿ-ն ունի դատավճիռ, նրանք չպետք է մասնակցեին, բայց մասնակցել են: «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները չպետք է մասնակցեին, իշխանությունը պետք է արգելեր նրանց մասնակցությունը, բայց իշխանությունը թույլ է տվել անգործության հետեւանքով, ավելին՝ իշխանությունը նրանց ընտրել է որպես գործընկեր, այ, դրա դեմ ենք բողոքում:

- Բայց 2008-ից հետո առաջին տարին չէ, որ ԲՀԿ-ն մասնակցել է ԱԺ ընտրություններին, ինչո՞ւ նախկինում այս հարցը չեք բարձրացրել:

- Ես համարում եմ, որ այդ ամբողջ ընթացքում, կարելի է ասել, 20 տարի Հայաստանում ապօրինություն է տիրում, իշխանությունը զավթված է եղել օտարերկրացիների կողմից:

- Ձեր կուսակցության հավաքած ձայները բավականին քիչ էին՝ 6 հազար 754: Կարծում եք, որ եթե ձեր ասած ուժերը չմասնակցեին ընտրությանը, դուք ԱԺ-ում կլինե՞ք:

- Եթե արդար, թափանցիկ ընտրություններ լինեին, շանս կունենայինք: Դուրս մնացած կուսակցություններից ցանկացածը այդ շանսից զրկվել է: Այսինքն՝ ընտրությունները մրցակցային չեն եղել, այսինքն՝ ժողովրդի ազատ կամքը չի դրսեւորվել: Ընտրակաշառքի գործով 300-ից ավելի քրեական գործ կա:

- Բայց չկան դատավճիռներ, չկա նաեւ օրենքով ապացուցված հանցանք:

- Այդ դեպքում միեւնույն է՝ ընտրությունները մրցակցային եւ արդար չեն եղել, որովհետեւ թեկնածուներից մի քանիսը հատուկ իշխանությունը վարկաբեկելով կամ զրպարտելով է խախտել արդար ընտրությունների իրավունքը: Եթե զրպարտություն են պետական մարմինների կողմից հայտարարված ընտրակաշառքի դեպքերը, դա նույնպես ազդում է ընտրությունների արդյունքների վրա, եթե ճիշտ են, կրկին ազդել են ընտրությունների վրա:

- Ձեր կարծիքով, որոշ ընտրատեղամասերի արդյունքների չեղարկումը ԲՀԿ-ից ձայների գողություն չէ՞ր:

- Ես մտածում եմ, որ դա ուղղակի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սխալ աշխատանքի արդյունք է: Դա ցույց է տալիս, որ ԿԸՀ-ն շատ վատ է կազմակերպել ընտրությունները, դրան գողություն ասենք, թե թալան, միեւնույն է՝ ԿԸՀ-ն բավարար չափով ջանք չի թափել՝ ընտրությունները կազմակերպելու համար:

- Շատերը ձեր քաղաքական ուժին համարում են իշխանությունների կցորդը: Դուք ձեզ ընդդիմադիր համարո՞ւմ եք:

- Չէ, մենք ընդդիմադիր չենք, ես՝ ինքս կարծում եմ, որ շատ հարցերում համաձայն ենք իշխող ուժի հետ: Օրինակ, ԵՄ-ի շուրջ ունեցած դիրքորոշման հետ, այսինքն՝ արտաքին հարաբերություններում վարած քաղաքականության հետ ես համաձայն եմ:

- Արցախի կորստի հետ ե՞լ եք համաձայն:

- Արցախի մասով ես համաձայն եմ, որ դա արել է Ռուսաստանը, հանձնողը Ռուսաստանն է:

- Նիկոլ Փաշինյանն էլ արցախցիներին ասում է թռածներ, մեղադրում է Արցախն Ադրբեջանին հանձնելու մեջ:

- Չէ, Արցախի ժողովուրդը զոհն է: Մեր հայրենիքը մեզնից 2 անգամ խլեցին, առաջին անգամ՝ 1921-ին, իսկ երկրորդ անգամ՝ 2023-ին: Մենք զոհ ենք: Եթե որեւէ հայի մեղադրում են, դա զրպարտություն է:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄՏԱՀՈԳՎԵԼՈՒ ՏԵՂ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻՆԵՐՆ ՈՒՆԵՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԻՐԵՆՑ ԻՆՏԵՐՆԵՏ Է ՄԱՏԱԿԱՐԱՐՎԵԼՈՒ

Ադրբեջանի պետական հիմնական հեռահաղորդակցության օպերատոր «Ազտելեկոմն» ու «Թիմ Տելեկոմ Արմենիան» կոմերցիոն հիմունքներով երկու երկրների տարածքով ինտերնետ տրաֆիկի տարանցման եւ մատակարարման պայմանագիր են կնքել: Հասկանալու համար, թե ինչ է իրենից ներկայացնում այս պայմանագիրը, ու ինչպիսի հետեւանքների այն կարող է հանգեցնել, «Հրապարակը» զրուցեց «Կիբեռհաբի» համահիմնադիր, կիբեռանվտանգության հարցերով փորձագետ **Արթուր Պապյանի** հետ:

- Հանրության շրջանում մտահոգությունների տեղիք է տվել այս պայմանագիրը: Արդյոք սա նշանակում է, որ Ադրբեջանը վերահսկողություն է ստանում «Թիմ Տելեկոմի» նկատմամբ:

- Ես մինչեւ վերջ դեռ չեմ ճշտել, բայց այն, ինչ հասանելի է հրապարակված հաղորդագրության մեջ, մեծ հաշվով, տարանցման մասին է խոսքը: Նույնիսկ այդ տարածման տեխնոլոգիան այնպես է, որ ֆիզիկապես կաբելն անցնում է մեր տարածքով, կաբելն էլ ինչ-որ մասով՝ գուցե: Ինչ-որ անիմաստ պանիկա է տարածվել:

- Մեր կաբելը գրեթե իրենց տարածք չի մտնում, այսինքն՝ մեծ հաշվով, մեզ այս պայմանագիրը պետք չէր կնքել:

- Չէ, տեսեք՝ ինչ է կատարվում: Օրինակ, «Թիմ Տելեկոմը» Հայաստան մտնող տրաֆիկի զգալի մասն արտահանում է: Այն, ինչ իրենք բերում են Հայաստան, իսկ իրենք նույնիսկ վրացական օպերատոր ունեն, եւ այն, դա գալիս է ու հետո Իրանի տարածքով գնում է, արտահանվում է՝ Իրաքին ենք վաճառում, ինչ-որ կարողություններ Իրանում են մնում: «Թիմ Տելեկոմը» բերում ու վերավաճառում է: Պլյուս «Թիմ Տելեկոմի» տնօրենի եղբայրն ու զարգացման մենեջերը՝ Ալիկ Եսայանը, իրենք նաեւ Firebird ընկերության հիմքում են կանգնած, Ղազախստանում են եւս մեկ Firebird ստեղծել: Այսինքն՝ «Թիմ Տելեկոմի» շահերից բխում է հնարավորինս շատ տարանցումներ, կապուղիներ ստեղծի՝ ինտերնետ բերող-վերավաճառող է: Այս պրոյեկտն այդ ընդհանուր կապուղիների բազմազանեցման կոնտեքստում պիտի նայենք, որ ղազախական Firebird-ը, հայկական Firebird-ն իրար հետ համակցվեն, որպեսզի այս AI գործարանի հետ աշխատողները տեսնեն, որ իրենց տրաֆիկը միայն Իրան ու Վրաստան չի գնում, որ մեկը կապը կտրի ու ամեն ինչ գնա: Այս կոնտեքստում է ամեն ինչ: Իրականում, մեր տրաֆիկի ճնշող մեծամասնությունը գնալու է Վրաստան, Վրաստանով դուրս գա Բուլղարիա՝ օրինակի համար, կամ գնում է Ռուսաստան: Բայց դա շատ անկանխատեսելի է, ինտերնետն այնպիսի բան է, որ դժվար է կանխագուշակել: Պետք է հասկանանք, որ այն, ինչ արվում է, տրանզիտի պայմանագիր է, այսինքն՝ ֆիզիկապես կաբելները մեր մոտով անցնում են, բայց ոնց որ այդ խողովակի միջով գազն անցնում է, այն չի համակցվելու մեր համակարգերի հետ առանձնապես:

- Հետեւաբար՝ այդ պայմանագրի իմաստը ո՞րն է:

- «Թիմ Տելեկոմը» վաճառում է ինտերնետ Ադրբեջանին, Ադրբեջանն էլ թողունակություն է ապահովում: Իմ ընկալմամբ, սա ավելի շատ կապված է ընդհանուր ենթակառուցվածքի հետ, որ այդ նույն Firebird-ն ավելի արդյունավետ աշխատի, եթե իրենց պետք լինի դուրս գալ Կենտրոնական Ասիայի երկրներ, այդտեղից էլ օգտագործեն մեր AI գործարանի կապուղիները եւ այլն: Այսինքն, սա շատ լավ բան է, մեզ պետք է, որ իրենք էլ մեզնից կախում ունենան վերջապես, բայց, մյուս կողմից, մեզ էլ է պետք՝ այլընտրանքային ելքեր: Այս պահին մենք ունենք ելք միայն Վրաստանով ու Իրանով, ամեն մի ավել կապուղի շատ օգտակար է: Հիմա մենք պիտի ամեն ինչ անենք, որ Թուրքիայի միջով ունենանք կապուղի. սա այդ պրոցեսի մասն է:

- Դուք նշեցիք Firebird-ը, արդյոք այս պայմանագրի հիմքում հենց Firebird-ի ու արհեստական բանականության գործարանի հարցը չէ՞:

- Չէ, չէ, դա չէ: Նայեք, մարդիկ անում են հսկայական ներդրումներ, ենթակառուցվածքային, Firebird Ղազախստան, Firebird Հայաստան... հիմա Հայաստանից տրաֆիկը ոնց է գնալու Ղազախստան, ամենակարճ ճանապարհը կլինի, որ Ադրբեջանով, Կասպից ծովով դուրս գա, մեր Firebird-ը, եթե պետք լինի, ինչ-որ բան համակցվի այնտեղ: Որպեսզի մեր Firebird-ը լիարժեք գործոն դառնա, մեզ համար շատ կարեւոր է, որ Հայաստանը հնարավորինս շատ կապուղիներ ունենա, որովհետեւ դրանով հսկայական տրաֆիկներ են գնալու գան:

- Ինչո՞ւ հենց Ղազախստան՝ թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկիր:

- Ղազախստանում բացել են այդպիսի խոշոր գործարան մերոնք, դա հայկական ներդրում է Ղազախստանում: Այդ մասին մի երեք օր առաջ հայտարարություն է եղել: Այսինքն՝ «Թիմ» ընկերության հիմքում Եսայան եղբայրները խոշոր բիզնեսներ են անում եւ չեն սահմանափակվում միայն Հայաստանով:

- Եվ, զարմանալի պատահականությամբ, Նիկոլ Փաշինյանին հայտնի մրցանակը տված երկրում, որը նաեւ թյուրքական պետությունների կազմակերպությունում է ընդգրկված: Հետաքրքիր պատահականություն է:

- Դա, հավանաբար, համընկնում չէ, բայց մյուս կողմից մեծ բիզնես ներդրումներ են: Նրանք հիմա վաճառում են ինտերնետ՝ Հայաստանով գնում է, Իրանով դուրս է գալիս Մերձավոր Արեւելքի երկրներ՝ հիմա դա վատ է, թե լավ է: Մենք խոսում ենք դիվերսիֆիկացիայի մասին, մենք խոսում ենք, որ Հայաստանը Եվրոպայի եւ արաբական երկրների միջեւ կամուրջ դառնա, խոսում ենք, որ Հայաստանը Կենտրոնական Ասիայի ու Եվրոպայի միջեւ կամուրջ դառնա: Սրա համատեքստում է դրան պետք նայել:

- Դուք բերում եք Իրանի օրինակը, բայց Իրանը չի ասում, որ ՀՀ տարածքն Արեւմտյան Իրան է, իսկ Ադրբեջանն ասում է ու դեռ միջազգային մակարդակով էլ այդ թեզն առաջ է տանում: Հարցը հետեւյալն է. նման երկրի հետ, որի հետ չունես դիվանագիտական հաստատված հարաբերություններ, մի երկիր, որը կապիտուլյացիային համարժեք պահանջներ ու նախապայմաններ է մեր առաջ դնում, ինչպե՞ս կարելի է նման պայմանագիր կնքել:

- Եկեք խոսենք տեխնիկական հարցերից: Տեխնիկական հարցն այն է, թե արդյո՞ք այդ կապուղիով ադրբեջանցիները կարող են հասանելիություն ստանալ հայաստանցիների տվյալներին, եւ հակառակը՝ արդյո՞ք հայաստանցիները կարողանում են հասանելիություն ստանալ ադրբեջանցիների տվյալներին. այդպես չէ՞, սա տեխնիկական հարց է:

- Այսինքն, վտանգ կա, որ ադրբեջանցիները հայաստանցիների տվյալներին հասանելիություն կարող են ստանալ:

- Հենց դա եմ ուզում ասել, քանի որ դրա կարիքն էլ առանձնապես չունեն: Եթե հիշում եք, պատերազմի օրերին մենք իրենց հեռախոսներն էինք գաղտնալսում, իրենք՝ մերը: Դրա հետ կապված առանձնապես ջանքեր պետք չեն, կամ էս ներդրումն այդ խնդիրը բացարձակ չի լուծում, շատ ավելի հարմար ու հեշտ ձեւեր կան: Անիմաստ խոսակցություններ են, ու ուղղակի պետք է հասկանանք, թե ինչ ծավալներ են ու ինչ հաշվարկային հզորություններ են պետք գալու... Եթե իրենք կարողանում են դրոն թռցնել, ցանկացած հեռախոս գաղտնալսել, ինչների՞ն է պետք, կարող են կոնկրետ թիրախավորված մարդու տրաֆիկը հանել, Պեգասուսով հարձակումները, որ մենք փաստագրել ենք հսկայական քանակի, ում պետք է, կոնկրետ այդ մարդուն են թիրախային կոտրել: Այսպես թե այնպես, ամբողջ երկրի տրաֆիկը՝ ով ինչ յութուբ նայեց, ինչ ռիլ արեց, բոլորինը պահեն՝ դա անիմաստ հաշվարկային կարողություններ են, տեղ էլ չունեն՝ այդքան ինֆորմացիա պահեն:

- Իսկ հնարավո՞ր է, որ ադրբեջանցիները կարողանան, օրինակ, զրկել Հայաստանին ինտերնետից:

- Ոչ, որովհետեւ իրականում Հայաստանն այդտեղով չէ, որ պիտի ինտերնետ ստանա: Մենք մեծ տարողություններ ունենք, հիմա խոսքը, հակառակը՝ այլ բանի մասին է, Հայաստանի տարածք է մտնում մեծ ծավալով ինտերնետ եւ Իրանի տարածքով վերավաճառվում է: Մենք հիմա ավելի մեծ քանակի ինտերնետ ենք բերում, քան մեզ պետք է, եւ հետո դա վերավաճառում ենք՝ մոտ 90 տոկոս: Մենք ավելի շատ տարողունակություն ունենք. Նախիջեւանից ի՞նչ ինտերնետ պիտի գա, կապերը գալիս են հիմնականում ծովային ճանապարհներով. մի կաբել գալիս է Իրանով, Հայաստան է մտնում, մյուս կաբելը Սեւ ծովով Եվրոպայի հետ է կապվում, գալիս մտնում է Վրաստանի տարածքով Հայաստան: Շատ ավելի մեծ, իրական մտահոգություն է, օրինակ, այդ Կովկասուս կապուղին, որն ադրբեջանցիներին է պատկանում, չնայած Վրաստանի տարածքում է: Այդտեղ ավելի հիմք ունենք խոսելու, քան այս հարցի շուրջ: Իրականում, ես սրա շուրջ բարձրացված աղմուկը հասկանում եմ, թե նաեւ ինչ է, բայցեւայնպես, շատ էլ լավ է՝ հիմա մենք ենք վաճառում իրենց: Ես՝ ինքս, ուզում եմ պարզել: Բայց այն, ինչ հրապարակային կա, ուղղակի ֆիզիկապես այդ կաբելը մեզ հետ չի էլ համակցվելու: Ընդհակառակը, ավելի շատ մտահոգվելու տեղ նախիջեւանցիներն ունեն, որ Հայաստանից իրենց ինտերնետ է մատակարարվելու՝ մոտավորապես այսպես է:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉԻ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԵՐՄԱՑՈՒՄԸ

Stratfor պարբերականը, որին նաեւ անվանում են «ստվերային կենտրոնական հետախուզական վարչություն», կարծում է, որ հայ-թուրքական հարաբերությունների ջերմացումը կարող է ուժեղացնել Թուրքիայի ազդեցությունը ռեգիոնում, նաեւ՝ մասնակիորեն նվազեցնել Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից: Սակայն այդ պրոցեսը Ռուսաստանը թույլ չի տալու, որ շատ զարգանա: Պարբերականի վերլուծաբանները նշում են, որ վերջին տարիներին Հայաստանն ու Թուրքիան ձեռնարկել են փորձեր՝ երկարատեւ լարվածությունից հետո նորմալացնելու հարաբերությունները: Հատկապես դա նկատելի դարձավ Ադրբեջանի կողմից ԼՂ-ում լիակատար կերպով իր վերահսկողության հաստատումից հետո: Միաժամանակ, Երեւանը ձգտում է նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանից՝ զարգացնելով քաղաքական, տնտեսական եւ ռազմական կապեր Արեւմուտքի հետ:

Stratfor-ում կարծում են, որ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների սերտացումը կարող է ուժեղացնել Թուրքիայի դիրքերը՝ որպես ռեգիոնալ «միջին կարգի խաղացողի», որը կապում է Եվրոպան, Կովկասն ու Մերձավոր Արեւելքը, ինչպես նաեւ՝ մասնակիորեն թուլացնել Իրանի ռեգիոնալ ազդեցությունը: Հայաստանի համար դա, ըստ վերլուծաբանների, կարող է նշանակել առեւտրային ուղիների ընդլայնում եւ հասանելիության ձեռքբերում արեւմտյան շուկաների հանդեպ, ինչպես նաեւ՝ արտաքին տնտեսական կապերի վերաձեւակերպում:

Միաժամանակ, հոդվածում ասվում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունները երկու երկրների համար էլ մնում են առանցքային կարեւորության եւ սահմանափակում են հարաբերությունների հնարավոր սերտացումը: Մոսկվան, ինչպես ենթադրվում է, կարող է կիրառել տնտեսական լծակներ, եթե զգա, որ Հայաստանի՝ Թուրքիայի եւ Արեւմուտքի հետ հարաբերությունները չափազանց խորացել են: Սահմանի բացումն էլ կարող է կախված լինել ներքաղաքական այն իրավիճակից, որը Հայաստանում կտիրի ընտրություններից հետո՝ ասված է հոդվածում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԳՈՐԾ ՈՒՆԵՆՔ ՈՉ ԹԵ ՍԽԱԼԻ, ԱՅԼ ԳԻՏԱԿՑՎԱԾ, ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Դրապարակի» զրուցակիցն է ՀՀ ժողովրդական արտիստ, պատվավոր պրոֆեսոր, Վանաձորի պատվավոր քաղաքացի, Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան **Հակոբ Ազիզյանը**:

- ՔՊ-ական պատգամավոր Արթուր Հովհաննիսյանն Աժ-ում հեգնում էր ընդդիմությանը՝ հարցնելով. «Միայն խոսում եք, իսկ ո՞ւր են 300 հազար ադրբեջանցիները»: Մինչդեռ նույն ժամերին Նախիջեւանում ընթանում էր «Վերադարձ Արեւմտյան Ադրբեջան» պետական համաժողովը:

- Լսեցի ու զարմացա: Ադրբեջանի ղեկավարությունն արդեն տարիներ շարունակ տարածքային պահանջներ է ներկայացնում Հայաստանին, իսկ ՔՊ-ական պատգամավորը ձեւացնում է, թե ոչինչ չի կատարվում: Սակայն նա մեղք չունի, իր առաջնորդն է բոլոր ՔՊ-ականներին պարտադրել այդպես խոսել: Ժողովրդին էլ ստիպում է լռել, վախ ներշնչել՝ իբր այդ չընդունողները կպատժվեն: «Արեւմտյան Ադրբեջանի» գաղափարը վաղուց Բաքվի պետական ռազմավարության մաս է դարձել: Նրանք Հայաստանի տարածքները ներկայացնում են որպես «պատմական ադրբեջանական հողեր» եւ այդ թեզի շուրջ ձեւավորում են հիմնավորումներ: Արցախի հայաթափումից հետո էլ տեսանք, որ Ադրբեջանի ախորժակը չնվազեց, մեծացավ: Երեկ թիրախը Արցախն էր, այսօր՝ մեր ինքնիշխան տարածքները: Այս ամենը տեսնելու համար հատուկ գիտելիքներ պետք չեն: Սակայն իշխանությունը շարունակում է հասարակությանը համոզել, թե այդ սպառնալիքները չափազանցված են կամ մտացածին: Այստեղ արդեն գործ ունենք ոչ թե սխալի, այլ գիտակցված, կործանարար քաղաքականության հետ:

- Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ Բաքվի եւ Երեւանի գործողությունները միմյանց չեն հակասում:

- Այդպես էլ կա: Ոչ թե չեն հակասում, այլ գործում են ներդաշն, համաձայնեցված: Բայց համոզված եմ, որ նրանց ծրագրերը չեն իրականանալու: Տարածաշրջանում իրավիճակը փոխվում է: Իրանը հերթական անգամ ցույց տվեց, որ չի պատրաստվում համակերպվել իրեն շրջանցող ծրագրերի հետ: Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ դեմ է տարածաշրջանում սահմանների փոփոխությանը եւ Սյունիքի շուրջ ցանկացած վտանգավոր սցենարի: Հայաստանի համար կենսական նշանակություն ունի Իրանի հետ ռազմավարական հարաբերությունների խորացումը: Եթե այս իշխանությունը չի հասկանում այդ իրողությունը, դա չի նշանակում, թե ժողովուրդը չի հասկանում: Վստահ եմ՝ քաղաքական փոփոխություններ լինելու են:

- Այնպես եք խոսում, կարծես Փաշինյանի իշխանության օրերը հաշված են:

- Ես կարծում եմ, որ նրա իշխանությունն ավարտվելու է մոտ ապագայում: Այսօր հասարակության մեծ հատվածը հիասթափված է, որովհետեւ երկիրը կանգնած է անվտանգային, քաղաքական ու բարոյական ծանր խնդիրների առաջ: Ռեպրեսիաներով հնարավոր չէ վերականգնել հանրային վստահությունը, ապահովել զարգացում կամ լուծել անվտանգության հարցերը: Ընդդիմադիր ուժերը պետք է կարողանան ձեւավորել միասնական օրակարգ: Ժողովուրդը պետք է տեսնի հստակ այլընտրանք: Ես իմ համակրանքը չեմ թաքցնում Սամվել Կարապետյանի նախաձեռնած շարժման նկատմամբ եւ կարծում եմ, որ այն կարող է լուրջ դերակատարում ունենալ առաջիկա գործընթացներում: «Ուժեղ Հայաստանն» այն ուժն է, որն ունակ է, պարտավոր է երկիրը ետ պահել կործանման ճանապարհից:

- Մինչ քաղաքական պայքարն ընթանում է, ըստ Ձեզ, ի՞նչ վիճակում են մշակույթն ու թատրոնը:

- Ցավոք, մշակույթն այսօր երկրորդական պլան է մղվել: Փնտրում եմ՝ ո՞ւր է մշակույթը, չեմ գտնում: Թվում է՝ ներկայացումներ կան, միջոցառումներ կան, բայց խորքային ազդեցությունը չի երեւում: Լոռու մայր թատրոնը ժամանակին ունեցել է այնպիսի բեմադրություններ, ինչպիսիք էին «Լիր արքան», «Անուշը», «Չար ոգին», «Ռուզանը», «Երկիր հայրենին», «Աշնան արեւը»: Դրանք պարզապես ներկայացումներ չէին, այլ գեղագիտական, ազգային ու դաստիարակչական մեծ արժեքներ: Բոլորի բեմադրիչը Վահե Շահվերդյանն էր, որի մասին արվեստաբան Ռուբեն Զարյանը կարծիք է հայտնել, որ շահվերդյանական գույները ոչնչով չեն զիջում հանճարեղ Վարդան Աճեմյանի գունաշխարհին: Բազմիցս առաջարկել եմ վերականգնել այդ ներկայացումները, պատրաստակամություն եմ հայտնել՝ օգնել այդ գործում, բայց արձագանք չեմ ստացել: Ինչ-որ բաներ բեմադրում են, միջոցառումներ կազմակերպում են, բայց դրանք հիմնականում միտված են փող բերելու խնդրի լուծմանը: Էդպես թատրո՞ն կպահեն: Եվ դա զարմանալի չէ: Երբ ամբողջ երկրում են արժեքները քամահրվում, մշակույթն էլ է դառնում նույնը՝ անտեսված, մոռացված, քամահրված: Մեզ մոտ գործում է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղը: Այդ մասնաճյուղը 22 տարի առաջ ստեղծվեց իմ եւ անվանի դերասան, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի տնօրեն, ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ, համատեղ ջանքերով: Ես եղել եմ նորաբաց մասնաճյուղի առաջին տնօրենը եւ շատ լավ գիտեմ, թե ինչ ծավալի աշխատանք է պահանջում այդ պաշտոնը: Այսօր, մեր ստացած տեղեկությունների համաձայն, տնօրեն Էլֆիկ Զոհրաբյանը միաժամանակ տնօրինում է մասնաճյուղը, դասավանդում է նույն մասնաճյուղում, դասավանդում է նաեւ Վանաձորի պետական համալսարանում, աշխատում է Հայաստանի թատերական գործիչների միության Վանաձորի թատերական ստուդիայում, միաժամանակ ղեկավարում է այդ ստուդիան, դերասան է Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան դրամատիկական թատրոնում, նույն թատրոնում նաեւ գրական բաժնի վարիչ է, իսկ տեղեկություններ կան, որ ներգրավված է նաեւ Ստեփանավանի նորաբաց թատրոնում՝ բեմադրական աշխատանքների մեջ: Հարց է առաջանում՝ մարդը ֆիզիկապես ինչպե՞ս կարող է լիարժեք կատարել այսքան տարբեր, մեծ պատասխանատվություն պահանջող աշխատանքներ: Տասնյակ տարիներ ղեկավարելով մասնաճյուղը՝ ես շատ լավ գիտեմ այդ պաշտոնի ծանրությունն ու ծավալը: Դա ամբողջական նվիրում պահանջող գործ է, ոչ թե ժամանցային կարգավիճակ: Ես հարց եմ տալիս՝ հնարավո՞ր է արդյոք այս ամենը համատեղել այնպես, որ բոլոր գործերը կատարվեն լիարժեք ու բարձր մակարդակով: Մի կողմից մենք խոսում ենք գործազրկությունից, երիտասարդ մասնագետների արտահոսքից, աշխատատեղերի պակասից, մյուս կողմից տեսնում ենք, թե ինչպես են բազմաթիվ պաշտոններ ու գործառույթներ կենտրոնանում մեկ մարդու ձեռքում: Սա ոչ միայն կառավարման արդյունավետության, այլ նաեւ հանրային արդարության հարց է: Եթե մեկ մարդն ամեն տեղ է, ապա շատ մարդիկ ոչ մի տեղ չեն լինում: Պետությունը որտե՞ղ է: Որտե՞ղ է վերահսկողությունը: Որտե՞ղ է հանրային շահի պաշտպանությունը: Ի վերջո, մարդը մեքենա չէ: Բնության օրենքներն անգամ հուշում են, որ չափից ավելի ծանրաբեռնվածությունը բերում է հոգնածության, իսկ հոգնածությունը՝ աշխատանքի որակի անկման: Ոչ ոք չի կարող միաժամանակ լինել բազմաթիվ տեղերում եւ բոլոր տեղերում հավասարապես արդյունավետ աշխատել՝ թեկուզ ամենատաղանդավոր մարդը լինի: Հենց այդպիսի մտածողության եւ նման կարեւոր հարցերին մատների արանքով նայելու հետեւանքն է, որ այսօր մեր պետությունը, մշակույթը եւ կրթական համակարգը կանգնած են բազմաթիվ խնդիրների առաջ: Այդ պատճառով էլ համոզված եմ՝ Հայաստանը քաղաքական փոփոխությունների հույժ կարիք ունի:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ՏՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԵՍ ԱՊՐՈՒՄ ԵՄ»

Լեւ Կուլիջանովի եւ Յակով Սեգելի նկարահանած «Տունը, որտեղ ես ապրում եմ» խորհրդային կինոնկարը սովետական կինոարվեստի ամենամարդկային եւ խորը ֆիլմերից է: Նկարահանվել է հետպատերազմական շրջանում, Գորկու անվան ստուդիայում, էկրան է բարձրացել 1957 թվականին: Այն արտացոլում է ոչ միայն «հալոցքի» շրջանը, այլ նաեւ նվիրված է սովետական մի ողջ սերնդի կյանքին ու ճակատագրին՝ սկսած պատերազմից, կորուստներից, ապագայի հանդեպ հավատից:

Առաջին հայացքից կինոնկարը չափազանց պարզ է: 1935 թվական. Մոսկվայի շրջաններից մեկում ստացած նոր բնակարաններ, սովետական ընտանիքների առօրյա կյանք, ուրախություններ, տագնապներ, սեր եւ հուսախաբություններ: Տունը պարզապես գործողությունների ծավալման ֆիզիկական վայր չէ, այլ երկրի գեղարվեստական սիմվոլ՝ երկիր, որը միավորում է տարբեր բնավորությունների, տարիքի եւ ճակատագրերի տեր մարդկանց: Բնակիչների ճակատագրերի միջոցով հեղինակները ցույց են տալիս, թե ինչ ճակատագիր է բաժին հասել մի ողջ սերնդի, որն անցել է նախապատերազմական տարիներով, դիմացել Հայրենական մեծ պատերազմի փորձություններին ու ճաշակել մեծ հաղթանակի բերկրանքը: Տունը նաեւ հասարակության մոդելն է: Բնակիչները վիճում են, խռովում, հաշտվում, սիրահարվում, բաժանվում, ծերանում: Սակայն, բոլոր տարբերություններով հանդերձ, նրանց միավորում է ընդհանուր՝ երկրի ճակատագրին իրենց մասնակցության գիտակցումը: Դրա համար է կինոնկարի անվանումը ստանում փիլիսոփայական իմաստ, եւ, ըստ էության, խոսքն այլեւս ոչ թե կոնկրետ տան, այլ՝ հայրենիքի մասին է:

Կինոնկարը հետաքրքիր երեւույթ է սովետական կինոարվեստի համար: Տասնամյակներ շարունակ խիստ գաղափարական ժապավեններից հետո էկրաններին հասարակ մարդն է՝ իր առօրյայով, ապրումներով ու հույզերով, ներքին կոնֆլիկտներով, իր ժամանակի եւ միջավայրի մեջ ապրող հասարակ մարդը: Ֆիլմում պաթոս չկա: Հասարակ մարդիկ, որոնց հետաքրքրում են ոչ միայն սեփական պետության կյանքն ու պատմությունը, այլ նաեւ՝ իրենց առօրյան: Պատերազմն էլ ներկայացված է մարդկանց ճակատագրերի միջոցով: Դրա շնորհիվ էլ ֆիլմն այդքան էմոցիոնալ ու համոզիչ է: Նույնիսկ ավարտն է «հասարակ» ու «մարդկային»: Պատերազմում տարած հաղթանակն էլ գալիս է ոչ թե պաթոսով, այլ այն մարդկանց հիշողություններով, որոնք չեն վերադարձել մարտի դաշտից: Կինոնկարում հանդես են եկել սովետական կինոյի լավագույն դեմքերը՝ Միխայիլ Ուլյանովը, Եվգենի Մատվեեւը, Վալենտինա Տելեգինան, Վլադիմիր Զեմլյանիկինը եւ այլք: «Տունը, որտեղ ես ապրում եմ» կինոնկարը պարզապես ընտանեկան դրամա չէ, այլ՝ մարդկային կյանքերի եւ ճակատագրերի տարեգրություն, որը մինչ այսօր դիտվում է հաճույքով ու հետաքրքրությամբ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԲԱՑԱՀԱՅՏ ՔԱՐՈԶ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Տիկոլական խունտայի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը զբաղված է հայ հասարակությանը թուրքական եւ ադրբեջանական հպատակությունն ընդունելու անխուսափելիության քարոզչությամբ: Դանիել Իոաննիսյանը պատահական մեկը չէ, նա Ադրբեջանի պահանջով Հայաստանի սահմանադրությունը վերաձեւակերպողներից է, մեկը նրանցից, որի միջոցով Ադրբեջանը Հայաստանի սահմանադրության տեքստից պետք է հանի Անկախության հռչակագրի հղումը, ինչը փաստացի նշանակելու է հրաժարում անկախությունից եւ ադրբեջանական հպատակության ճանաչում: Հիմա պետք է այնպիսի քարոզչական ֆոն ապահովել, որ հայ հասարակությունը մտածի, որ Ադրբեջանին հպատակվելու այլընտրանք չկա, մենք անպաշտպան ենք, մեզ կկոտորեն:

Երկու օր անընդմեջ Իոաննիսյանը սոցցանցի իր էջում գրում է Ռուսաստանի եւ ռուսական իշխանությունների ձախողման, սեփական երկիրը պաշտպանելու անկարողության մասին: «Երեկ ուկրաինացիք իրականացրել են ամենամեծ օդային հարվածը Մոսկվային: Մոսկվայի ամենամեծ նավթավերամշակող գործարանը վառվում է, բազմաթիվ խոցումներ կան: Թե բա՝ «անվտանգության երաշխավոր»... Սկի չի կարողանում սեփական մայրաքաղաքի անվտանգությունն ապահովի»,- Ուկրաինայի կողմից Ռուսաստանի մայրաքաղաքի վրա հարձակումների օրերին գրում է Իոաննիսյանը: Մի հատված էլ՝ հաջորդ գրառումից. «Երեւանում որոշները աջ ու ձախ պնդում են, որ Ռուսաստանը պետք է մեզ ինչ-որ մեկից պաշտպանի, բայց մեկը լինի՝ Ռուսաստանին պաշտպանի: Ուրեմն Ռուսաստանն արդեն 12 տարի է, ինչ օկուպացրել է 2,5 միլիոն բնակչությամբ Ղրիմի թերակղզին: Պուտինի հպարտությունն էր դա: Բայց հիմա ուկրաինացիք կարողացել են հեռահար հարվածներով կտրել Ղրիմ վառելիքի մուտքը թե՛ ցամաքով եւ թե՛ ծովով: Պատկերացնո՞ւմ եք, «ուժեղ տղա» Վլադիմիր Պուտինը չի կարողանում ապահովի, որ իր հպարտությունը հանդիսացող Ղրիմի 2,5 միլիոն բնակիչները բենզին ու դիզվառելիք ունենան: Որքան էլ տարբեր ԼՕՄ-եր գոռան, որ Ռուսաստանն ուժեղ է, արդեն ակնհայտ է դառնում, որ ոչ, արդեն էլ ուժեղ չի»:

Իսկ ո՞վ է այդքան ուժեղ, որ կարող է երաշխավորել իր դաշնակիցների անվտանգությունը, չլինի՞ Միացյալ Նահանգները, որի մերձավորարեւելյան դաշնակիցներ Կատարը, Բահրեյնը, Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան ենթարկվում էին Իրանի հրթիռային հարվածներին միայն այն պատճառով, որ թույլ էին տվել իրենց տարածքում ամերիկյան ռազմաբազաներ կառուցել, եւ այդ ռազմաբազաներն օգտագործվում էին Իրանի դեմ թշնամական գործողություններ իրականացնելու համար: Իրանն այդ երկրների եւ դրանց քաղաքացիների դեմ թշնամանք չուներ, բայց այդ երկրները, դրանց ենթակառուցվածքները ենթարկվում էին հարձակման միայն այն պատճառով, որ ամերիկյան վասալներ են: Ավելին, երբ Իրանը հրթիռակոծում էր Բահրեյնի ամերիկյան բազաները, տեղի բնակչությունը դա ընդունում էր ցնծությամբ, փողոց էին դուրս գալիս՝ չթաքցնելով իրենց ոգեւորությունը, քանի որ խոցվում էին թշնամի եւ նվաճող ԱՄՆ-ի բազաները: Դրա մասին Իոաննիսյանը, բնականաբար, որեւէ բառ չգրեց, ամերիկյան ուժն ու հզորությունը կասկածի տակ դնելն արգելված է:

Հիմա վերադառնանք Ռուսաստանի թույլ լինելու եւ իրեն պաշտպանել չկարողանալու թեզին: Ո՞րն է դրա անընդմեջ տարածման նպատակը: Հայաստանը եւ հայ հասարակության ճնշող մեծամասնությունը Ռուսաստանը եւ Հայաստանում ռուսական ռազմական ներկայությունը համարել են Հայաստանի անվտանգության երաշխիք Թուրքիայից, իսկ 2020 թվականի պարտությունից հետո՝ նաեւ Ադրբեջանից եկող սպառնալիքից: Համարվել է, որ Հայաստանն այդքան ուժ եւ կարողություն չունի՝ սեփական ուժերով պաշտպանելու իր անվտանգությունը եւ տարածքային ամբողջականությունը, եւ Ռուսաստանը, լինելով ատոմային տերություն եւ ունենալով աշխարհի ուժեղ բանակներից մեկը, կարող է լինել անվտանգության երաշխավոր:

Հիմա, երբ ասվում է, որ Ռուսաստանը ռազմական առումով այնքան թույլ է, որ չի կարողանում պաշտպանել նույնիսկ իր մայրաքաղաքը կամ Ղրիմը, դրանով հայ հասարակությանը մի ուղերձ է հղվում՝ թույլ Ռուսաստանը չի կարող մեզ պաշտպանել Թուրքիայից եւ Ադրբեջանից: Իսկ ի՞նչ անել նման պայմաններում, երբ մեզ պաշտպանող չկա, իհարկե, խելոք ենթարկվել Թուրքիայի եւ Ադրբեջանի պահանջներին, որպեսզի նրանց առիթ չտանք՝ հարձակվելու եւ ոչնչացնելու Հայաստանը: Այնպես որ, եթե Ադրբեջանը պահանջում է, որ Հայաստանում իշխանությունը գտնվի ՔՊ-ական խունտայի ձեռքին, պետք է համակերպվել, փոխել սահմանադրությունը եւ հրաժարվել Անկախության հռչակագրից, եթե միջանցք են ուզում, պետք է ասել՝ խնդրեմ, եթե պահանջում են, որ 300 հազար ադրբեջանցի գան ու բնակվեն Հայաստանում, պետք է խելոք համաձայնել, եթե Թուրքիան պահանջում է հրաժարվել ցեղասպանության միջազգային ճանաչումից, պետք է հայտարարել, որ ցեղասպանության մեղավորը Ռուսաստանն է ու մի քիչ էլ՝ մենք, որ միամտաբար եւ հիմարաբար ըմբոստացել ենք մեր թուրք տերերի դեմ, Արարատն էլ մի քանի հազարամյակ թուրքական լեռ է եղել, մենք դրա հետ ի՞նչ կապ ունենք:

Երբ ԱՄՆ-ն կամ հավաքական Արեւմուտքն ուզում է Ռուսաստանի պարտությունը, դա իր բացատրությունն ունի, այդ պարտությունը հնարավորություն է տալու տիրանալ Ռուսաստանի տարածքին եւ հանքահումքային ռեսուրսներին ու անխնա շահագործել այդ հարստությունները, բայց երբ ադրբեջանական վասալի կարգավիճակ ունեցող հայաստանյան խունտայի ներկայացուցիչներն են դրա վրա ուրախանում, մի քիչ անհասկանալի է՝ այդ թալանից ԱՄՆ-ն կամ ԵՄ-ն ձեզ բաժին չեն հանելու: Չնայած մի բացատրություն այնուամենայնիվ կա. Ռուսաստանի հաղթանակը հավաքական Արեւմուտքի նկատմամբ, վտանգելու է խունտայի գոյությունը:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 24.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ...

Գրիգոր ԼԱԼԱՅԱՆ

Հայաստանում կայացած խորհրդարանական վերջին ընտրությունները, աղաղակող խախտումներով հանդերձ, ձեւավորեցին ոչ լեգիտիմ իշխանություն: Գործող վարչակարգը, ստանալով ընտրողների կեսից պակաս քվե, կորցրել է հանրային աջակցությունը եւ երկիրը տանում է նոր անկանխատեսելի փորձությունների:

Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները չկարգավորած, տնտեսական այլընտրանք չստեղծելով եւ Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները փակուղի մտցնելով՝ Փաշինյանը երկիրը կանգնեցրել է տնտեսական խոր ճգնաժամի առաջ: Բանակի կազմաքանդումից հետո իշխանությունն ավերում է նաեւ տնտեսությունը՝ սպառելով պետության դիմադրողականության վերջին գործոնը: Իրացման խնդիրների մեջ հայտնված տնտեսվարողները զանգվածաբար աշխատակիցներ են ազատում: Իսկ կառավարության՝ վարկերի մարման վեցամսյա հետաձգումը խնդիրը չի լուծում, այլ միայն քողարկում է, քանի որ, եթե արտադրողն այսօր չի կարողանում իրացնել իր բերքը, վեց ամիս անց էլ չի կարողանա սպասարկել վարկը: Արդյունքում՝ պետությունը կամ միլիարդավոր նոր պարտքեր կկուտակի՝ բանկային համակարգը փրկելու համար, կամ կառգրավի վարկային բեռի տակ մնացած արտադրողների գույքը՝ տնտեսությունը վերջնականապես կոլապսի ենթարկելով:

Զուգահեռաբար, թշնամին օգտվում է իրավիճակից՝ իշխանություններին նոր նվաստացուցիչ պահանջներ պարտադրելու եւ տարածքային հավակնությունները լեգիտիմացնելու համար: Հունիսի 3-4-ին Բաքվում Իլհամ Ալիեւի հովանավորությամբ կայացել է «Վերադարձ դեպի Արեւմտյան Ադրբեջան» խորագրով միջազգային գիտաժողովը, որտեղ այդ երկրի Միլի մեջլիսի պատգամավոր Ազիզ Ալեքբերլին հայտարարել է, որ Փաշինյան-Ալիեւ բանակցությունները 300 հազար ադրբեջանցու՝ «պատմական հողեր» վերադառնալու հնարավորություն են ստեղծում: Դրանից ընդամենը մի քանի օր անց՝ հունիսի 18-19-ին, Նախիջեւանի Օրդուբադ քաղաքում կայացել է «Վերադարձ դեպի Արեւմտյան Ադրբեջան» երրորդ փառատոն-կոնգրեսը, որտեղ քննարկվել են Հայաստան «վերադարձի» հեռանկարները:

Իսկ ինչո՞վ է զբաղված ՀՀ իշխանությունը. շարունակում է խորացնել ներքին պառակտումն ու քայքայել հանրային համերաշխությունը: Այս քաղաքականությունը շատ շուտով ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական եւ հոգեբանական իրավիճակ է ստեղծելու, որտեղից ելք փնտրելու փաշինյանական «ջանքերը» կհանգեցնեն հանրությանը «ադրբեջանցիների հետ միասին ապրելու» գաղափարը պարտադրելուն...

Ահա թե ինչպես են քայլ առ քայլ, ազգային շահերը հետեւողականորեն ոտնահարելով սպանում պետությունը: Հանրությունն արդեն ցույց է տվել, որ հաշտ չէ այս ավերիչ քաղաքականության հետ: Մնում է, որ գործի անցնի ընդդիմությունը...

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am